

**Գարեգին Նժդեհի ծննդյան  
125 ամյակի առիթով**

**ՋԱԲԱՎԿՍ**

Աժան ձեռք չէ բերում առիծի մորթին:

Այդ այսպես լինելով հանդերձ՝ երբ մեծացար դու, զաւա՛կս, ձգտի՛ր տիրանալ նրան, բայց միամտութիւն չունենաս կարծելու, թէ Երկրագնդի վրայ կարելի է փառքի տէր դառնալ, առանց նախանձահեղձ սինլքորների չարութիւնը գրգռելու:

Ձօրավա՛ր ես եօթ վերք - չզարմանաս, եթէ մի օր դասալիքը դատաւորդ հանդիսանայ: Մեր աշխարհի լրբութիւններից մէկն էլ այդ է, չզարմանաս եւ չկրկնես զայրոյթով. «Թող զինուորն իր ստացած վերքերը եւ հովիւը՝ իր ոչխարները համրէ»:

Չար անասուն է մարդս, երբ նախանձում է: Մեր աշխարհում միշտ էլ վատասիրտը հայհոյել է աներկիւղ ասպետին, երկչոտը՝ մութ անկիւնից քար նետել հերոսին:

Նախանձը - մասնաւորապէս հայկականը - ընտրում է ճամբաներից ամենակարճը, եւ թոյլատրելի համարում թշնամանքի բոլոր զէնքերը:

Նա, որին դեռ երէկ էր, ինչ խլեցիր առիծի բերնից, փրկեցիր ստոյգ մահից՝ վաղը կարող է իժի նման գարշապարդ փնտռել:

Նա, որն այսօր ձիուդ ասպանդակները բռնելը իր համար պատիւ է համարում՝ վաղը կարող է փողոցաշունչ ամբոխը գրգռել անձիդ դէմ:

Նա, որ երէկ խորապէս կը ցաւէր, թէ հայոց դաշտերում չի աճում այն ազնիւ դափնեվարդը, որ արժանի լինէր յաղթական ճակատող զարդարել՝ վաղը կարող է ցեխ նետել քո կատարած պատմական գործին:

Մի՛, մի՛ զարմանար, եթէ իրենց կեանքը սրիդ պարտողները այսպէս վարուեն քեզ հետ, եւ մի՛ զայրանար, քանզի անձիդ դէմ ապերախտողը շուն չէ՛, այլ՝ մարդ:

\* \* \*

Մէր, յարգանք, պաշտամունք պարտադրել՝ նշանակում է իշխանութիւն ունենալ մարդկանց հոգիների վրայ:

Պաշտամունք - ասել է՝ ճանաչում ենք մեր պաշտածի իշխանութիւնը, եւ բարոյական որոշ տուրք տալիս նրան:

Ուրիշների մէջ մենք, էապէս, սիրում ենք այն, ինչ որոշ չափով կայ ե՛ւ մեր մէջ:

Արին սիրում է արիութիւնը անգամ իր հակառակորդների մէջ: Մենք սիրում ենք նրանց, որոնց նմանում ենք մասամբ, եւ առնուազը՝ անտարբեր ենք դէպի այն բոլորը, որոնք հոգեբանօրէն օտար են մեզ: Չայրենապաշտը քո անծի մէջ տեսնում է մի բան իր ոգուց, եւ ցնծում քո յաջողութիւնների առթիւ: Անհայրենասէրն, ընդհակառակը, քո անծի, քո գործերի մէջ տեսնում է այն, ինչ պակասում է իրեն - եւ հէնց այդ է պատճառը, որ նա չի՛ հանդուրժում քո հոգեւոր լուծը, քո իշխանութիւնը: Ահա՛ թէ ո՛ւր է շրջապատիդ որոշ տարրերի պաղ անտարբերութեան, երբեմն էլ՝ թշնամանքի գաղտնիքը:

\* \* \*

Սինլքորներ կան, որոնց եթէ ապտակեցիր, իրենց ստացած հարուածը կ'ընդունին ուղղուած իրենց քաղաքական փարախի, եկեղեցու, ծրագրի դէմ: Թքեցի՞ր - թքուած կը հռչակեն իրենց տէրերը, եւ նրանց կռնատակից կը նետեն քեզ:

Ջրի պէս շարժուն, ջրի պէս ամէն ձեւ ու գոյն առնելու ընդունակ՝ սրանք մէկի ստուերն են, միւսի՛՝ արծազանգը, երրորդի՛՝ կապարճակիրը:

Մի աստուածութիւն ունին - օրուայ իշխանաւորը, որի մանկլաւիկը, պնակալէզը, շնիկը լինելու մէջ է իրենց երջանկութիւնը: Եւ միշտ էլ ունին - մի ձեռքում խուճկ, միւսի մէջ՝ ցեխ: Վա՛յ քեզ, եթէ կայսերաբար առատածեռն չեղար սրանց նկատմամբ: Վա՛յ, եթէ չզնահատեցիր սրանց սողունութիւնը: Եւ հազար վա՛յ, եթէ ժպտալու փոխարէն «անհեռատեսութիւն» ունեցար բերան արիւնելու չափ զօրաւոր կերպով քաշելու սրանց սանձը:

Նման չարարուեստ էակներից շաղախուած մի ցածոգի ամբոխ, դարեր առաջ, արդարն Արիստիդէսին-իր ծայրայեղ ազնուութեան համար - հայրենի հողէն ու ջրէն օգտուելու իրաւունքից զրկեց. դա սպանեց Սոկրատէսին, եւ, աւազակների հետ՝ խաչ հանեց Նազովրեցուն:

\* \* \*

Չայաստանից դուրս, իմ ճամբին քար ու տատասկ ցանողներ շատ եղան: Գիտեմ, գաւակս, տարբեր ճամբայ պիտի չունենաս նաեւ դու: Եւ եթէ քեզ յաջողուեց ոտքերիդ արիւնով յագեցնել տատասկները, եւ քարերը վերածել վերելքի հեշտացնող մարմարիոնէ սանդուխների՝ վատերը պիտի կուրանան, որպէսզի չտեսնեն մեծութիւնը կատարածդ գործի:

\* \* \*

Չեռու հայրենի լեռներից, ես սովորեցի թքել ինձ թշնամացող նախանձոտ տգիտութեան ու չարութեան վրայ - թքել ու անցնել: Քեզ, սակայն, պիտի չյանձնարարեն այդ վարքագիծը: Դու աշխատի՛ր աւելի՛ զօրաւոր լինել, քան եղաւ հայրդ: Դու սովորի՛ր ծիծաղել մարդկային վատութիւնների վրայ ու անցնել անցասուն:

Ո՛հ, ուր էր թէ գէթ քո սերունդը ազատ մնար անհայրենիք կեանքի անէծքից, եւ արդար փառքը - առիւծի մորթին - դու փնտրէիր հայրենի ազատ եւ անկախ աշխարհում՝ միշտ գիտակցելով, որ հազարիցս լաւ է պատմական մի գործ կատարել, թէկուզ հազար թշնամի շահելով, քան մարդկային չարութիւնից զերծ մնալու գնով՝ դուրս մնալ պատմութիւնից:

**Գ. Նժդեհ**

*«Ռազմիկ», 1940թ., թիւ 1*

## ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Գազիկ Տերտերյան

Պետությունների եւ ազգային հանրությունների առաջնային խնդիրներից է առկա իրադրության համալիր գնահատումը եւ ապագա զարգացումների վերաբերյալ որոշակի պատկերացումների ձեւավորումը:

Ներկայում աշխարհի առաջատար երկրներում մեծ պահանջարկ ունեն կանխատեսումները եւ սցենարային մշակումները, որոնք դարձել են քաղաքական մշակույթի կարեւոր բաղադրամաս:

Պետք է ասել, որ գիտական կանխատեսման մեթոդները մշտապես կատարելագործվում են, ինչը զգալիորեն բարձրացրել է կանխատեսումների հավաստիությունը: Այսօր կիրառվում են մի քանի տասնյակ մեթոդներ, որոնցից մի քանիսը համառոտ կներկայացնենք ստորեւ:

*«Հանճարեղ» կանխատեսում.* Ընդունված է համարել, որ «հանճարեղ» կանխատեսումներ կարողանում էին կատարել միայն անցյալի գուշակները (ինչպիսին էր, օրինակ, Նոստրադամուսը): Սակայն նման կանխատեսումներ կատարվել են նաեւ մեզ համեմատաբար ավելի մոտ ժամանակներում: Օրինակ, հայկական արմատներ ունեցող նշանավոր պոետ Վելիմիր Խլեբնիկովը դեռեւս 1912թ. կանխատեսել էր Ռուսաստանյան կայսրության կործանումը 1917թ.: Մեր օրերում էլ կան անհատներ, որոնց կանխատեսումների ճշգրտությունը զարմացնում է ժամանակակիցներին: Օրինակ, «Միտումների հետազոտման ինստիտուտի» ղեկավար Ջերալդ Սելենտեին անվանում են «ամերիկյան Նոստրադամուս», քանի որ նա կանխատեսել է 1987թ. ֆոնդային շուկաների անկումը, Խորհրդային Միության փլուզումը եւ այլն: Համաձայն Սելենտեի վերջերս արած պնդումների՝ Միացյալ Նահանգների համաշխարհային հեգեմոնիայի վերջը մոտ է. նա գուշակում է, որ ԱՄՆ-ին ներքին ապստամբություններ են սպասվում, որոնք կավարտվեն հեղափոխությամբ:

*«Դելֆի» մեթոդը.* Մեթոդի էությունը հետևյալն է: Սկզբում «անհայտ» փորձագետներն (անձը չի բացահայտվում) իրենց կանխատեսումներն են ներկայացնում հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ, որոնք տրամադրվում են հետազոտության բոլոր մասնակիցներին: Փորձագետները պետք է քննադատաբար մեկնաբանեն ծայրահեղ տեսակետները եւ արդյունքում՝ հիմնավորեն կամ փոխեն սեփական գնահատականները: Համադրումների գործընթացը շարունակվում է այնքան ժամանակ, մինչեւ

ծեւավորվում է կազմակերպիչների եւ փորձագետների համար ընդունելի տարբերակը:

«Դելֆի» տեխնոլոգիայի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է պահպանել բազմաթիվ նախնական պայմաններ, սակայն գլխավոր գործոնն, իհարկե, բարձրորակ փորձագիտական հանրության առկայությունն է:

«Սցենարներ գրելու» մեթոդը. Այս մեթոդը հատկապես տարածված է երկարաժամկետ կանխատեսումներ կատարելիս: Սցենարները, որպես կանոն, ենթադրում են իրադարձությունների զարգացման երեք հնարավոր տարբերակ. լավատեսական, հոռետեսական եւ առավել հավանական: Ընդունված է համարել, որ այս մեթոդի տեսական հիմքերը մշակվել են անցյալ դարի 60-ական թթ., իսկ կիրառական նշանակության առաջին սցենարային պլանավորումը 1971թ. իրականացրել են Royal Dutch Shell նավթային ընկերության վերլուծաբանները. նրանք այդպիսով փորձել են հաշվարկել OPEC-ի կողմից նավթի գների բարձրացման (ինչն այն տարիներին խիստ ակտուալ էր) հնարավոր տարբերակները եւ կանխատեսել դրանց հետեւանքները:

Մտածողության սցենարային կերպը թույլ է տալիս ավելի անկաշկանդ ռեժիմով գուշակել լոկալ կամ գլոբալ զարգացումների հնարավոր, երբեմն՝ փոխբացառող եւ ծայրահեղ թվացող տարբերակները: Սցենարային պլանավորման ժամանակ բարձր է գնահատվում փորձագետների երեւակայությունը, եւ պատահական չէ, որ նման մշակումներում հաճախ ներգրավվում են ոչ միայն տվյալ հիմնախնդրի գծով նեղ մասնագետները, այլեւ ֆանտաստ գրողները, շախմատիստները եւ այլք (այսպես կոչված՝ ստեղծագործ, «ոչ ստանդարտ» անձնավորությունները): Նման «ազատ» մոտեցումը հնարավոր զարգացումներին, այլ առավելությունների թվում, թույլ է տալիս նախապես պատրաստվել ամենաանսպասելի ռազմաքաղաքական կամ տնտեսական շրջադարձերին: Այդ հանգամանքների շնորհիվ «սցենարային տեխնոլոգիաները» լայն տարածում են գտել ոչ միայն պետական կառույցներում կամ նրանց հովանավորությամբ գործող «ուղեղային կենտրոններում», այլեւ խոշոր առեւտրային ընկերություններում:

Գոյություն ունեն սցենարային մշակումների տարբեր մեթոդներ, սակայն, որպես կանոն, դրանք ենթադրում են հետեւյալ քայլերի իրականացումը.

- հնարավորության դեպքում ճշտվում է իրավիճակի զարգացման ընդհանուր ֆոնը, եւ այդ համատեքստում առանձնանում են այն իրադարձությունները, որոնք իրականանալու մեծ հավանականություն ունեն,
- որոշվում են այն գործոններն ու բնութագրիչները, որոնք առավելագույն մեծ ազդեցություն ունեն տվյալ իրադարձության զարգացման վրա,

- հնարավորինս որոշվում են վերոնշյալ գործոնների եւ բնութագրիչների ազդեցության առավելագույն եւ նվազագույն չափերը,

- դրանց տրամաբանական համեմատության արդյունքում ձեւավորվում են այն հնարավոր սցենարները, որոնց իրագործման հավանականությունը գնահատվում է առավելագույն բարձր կամ, զոմե, տեսականորեն չի բացառվում:

*«Ֆորսայթ» մեթոդ.* Կանխատեսման ոլորտում այսօր հստակ երեւում է համակցված մեթոդների ստեղծման միտում, որոնցում համադրվում են տարբեր մոտեցումներ եւ տեխնոլոգիաներ: Որպես նման օրինակ՝ առավել տարածված է «Ֆորսայթ» մեթոդը՝ «ապագայի տեսլականը»:

Այս մեթոդը համադրում է «Դելֆի», «սցենարներ գրելու» եւ այլ մեթոդների ալգորիթմները: «Ֆորսայթի» կիրառման նպատակը «փորձագիտական հանրության առավել ամբողջական համաձայնության հասնելն է սոցիալ-տնտեսական եւ գիտատեխնոլոգիական զարգացման հարցերում»:

Բոլոր հնարավոր տարբերակները հաշվի առնելու եւ ամբողջական պատկերն ստանալու համար ներգրավվում են մեծ թվով փորձագետներ: Այսպես, գիտատեխնոլոգիական զարգացման ճապոնական երկարաժամկետ կանխատեսումներին, որոնք կատարվում են հինգ տարին մեկ, մասնակցում է ավելի քան 2 հազար փորձագետ, որոնք ներկայացնում են գիտության, տեխնոլոգիաների եւ տեխնիկայի զարգացման բոլոր կարեւորագույն ուղղությունները:

«Ֆորսայթի» հիմնական սկզբունքներն են.

- Ապագան կերտվող է. այն կախված է գործադրվող ջանքերից:
- Ապագան բազմատարբերակ է (հնարավոր են ապագայի շատ տարբերակներ), այն սկիզբ չի առնում անցյալից ու կախված է նաեւ այն քայլերից, որոնք կձեռնարկեն մասնակիցները:
- Ապագան չի կարելի ճշգրիտ կանխատեսել կամ գուշակել. ապագային պետք է պատրաստ լինել:

*Միտումների էքստրապոլյացիա.* Այս եղանակի միջոցով ուսումնասիրվում են արդեն գոյություն ունեցող ցուցանիշների զարգացման միտումները, որոնք մաթեմատիկական մեթոդներով էքստրապոլացվում են ապագային: Հիմնային սկզբունք է այն, որ «ապագան ձեւավորվում է այն նույն ուժերի ազդեցության ներքո, որոնք անցյալում վճռորոշ դեր են խաղացել»: Մեթոդն արդյունավետ է կարճաժամկետ կանխատեսման պարագայում, երբ պայմանները կայուն են մնում ժամանակի երկար հատվածում, որն «ընդգրկում է ժամանակի ինչպես անցյալում դիտվող, այնպես էլ կանխատեսվող հատվածը»:

## Խոհափիլիսոփայական մոտեցում

Այս ուղղության հիմնադիր է համարվում հայտնի փիլիսոփա Եւքաղաքագետ Ալեքսանդր Պանարինը (1940–2003թթ.): Նման մոտեցման ելակետը պատկերացումն է այն մասին, որ մարդկության ապագան որակապես այլ է, եւ այն անհնար է էքստրապոլացնել այսօրվա իրողություններից: Ըստ Պանարինի՝ «մարդկությունը կանգնած է երկընտրանքի առջեւ. կամ կբացի որակապես այլ ապագայի դուռը, կամ ընդհանրապես ապագա չի ունենա»: Իսկ պնդումը, թե ապագան ներկայի շարունակությունն է, այսինքն՝ «ստեղծված բնութագրիչների եւ միտումների քանակական ավելացումն է», քննադատության չի դիմանում՝ երեք հիմնավորումներով:

Այդ հիմնավորումներից *առաջինը* կապված է «աճի էկոլոգիական սահմանների»՝ երկրագնդի էկոլոգիական գերբեռնվածության հետ: Դա պահանջում է փոխել արդի տեխնիկական քաղաքակրթության զարգացման պարադիգմը եւ բնության հետ նրա հարաբերությունների ձեւերը:

*Երկրորդը* կապված է բարոյական այլասերման միտումների հետ, որն ի հայտ է գալիս ոչ միայն զանգվածային վարքագծին վերաբերող վիճակագրության աղետալի պատկերի, այլեւ արդի էլիտաների կողմից ընդունվող քաղաքական, տնտեսական, վարչա-կառավարչական որոշումների էական վատթարացման արդյունքում: Առաջ է գալիս արդի մարդկության բարոյական եւ վարքագծային կողմը ձեւավորող սոցիոմշակութային պարադիգմի փոփոխման անհրաժեշտություն:

Պետք է ասել, որ բարոյական, խոհափիլիսոփայական գործոնն այլ կանխատեսումային եղանակներում, որպես կանոն, հաշվի չի առնվում: Մինչդեռ այդ հանգամանքն առավել քան կարելու է եւ, ի դեպ, կապված համակարգային ճգնաժամի գործընթացների հետ՝ վերջերս սկսել է արժեւորվել:

*Երրորդը* կապված է մարդկության բարեկեցիկ եւ ոչ բարեկեցիկ հատվածների միջեւ խորացող սոցիալական բեւեռացման հետ: Այնինչ, ավելի վաղ համարվում էր, որ գլոբալ մոդեռնացման գործընթացն իրականացվում է միասնական համամարդկային հեռանկարի հետ քիչ զարգացած երկրների, տարածաշրջանների հաղորդակցման հունով:

Նկատենք, որ Պանարինի մոտեցումներն այսօր կիսում են բազմաթիվ անվանի փիլիսոփաներ, սոցիոլոգներ եւ քաղաքագետներ: Միեւնույն ժամանակ, համաձայն կանխատեսումների տեսության փոքր-ինչ պարադոքսալ դրույթի, ապագան կարելի է «բարելավել» միայն այն «լավ իմանալու» պարագայում:

## **ԱՊԱԳԱՅԻ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Սուրեն Սարյան**

Ներկա ժամանակաշրջանում առավել քննարկվելիք թեմաներից է դարձել գլոբալ զարգացումը, որի առնչությամբ արդի քաղաքական միտքը շարունակաբար սցենարներ եւ կանխտեսումներ է ներկայացնում:

Շատ երկրներ այսօր կանգնած են քաղաքակրթական ընտրանքի առջև: Այդ հարցի պատասխանը, սակայն, կարող է ի հայտ գալ «ո՞ր է գնում մարդկությունը» հարցի պատասխանին զուգահեռ:

Փորձագետները նշում են, որ 2011 թվականը կարող է Եվրասիայի համար դառնալ այնպիսի մի տարի, ինչպիսին դարձավ Եվրոպայի եւ ԽՍՀՄ-ի համար 1929 թվականը՝ «մեծ ճգնաժամի եւ բեկման» տարի, երբ վերջնականապես թափ են հավաքելու հասարակության զարգացումն առաջիկա տասնամյակներին կանխորոշող միտումները:

Ապագայագետները (ֆուտուրոլոգները) նշում են, որ այսօր որոշվում է, թե ինչպիսին է լինելու աշխարհը 2050-ին, եւ նախապատրաստվում է այն, թե ինչպիսին աշխարհը կլինի 2100-ին: Իսկ դրա համար հարկ է մտածել ապագայի մասին՝ հասկանալ, թե ինչն է այն կանխորոշելու եւ ինչպես կարելի է նրա վրա ազդել:

Այսօրվա աշխարհն արագորեն փոխվում է. եւ փոխվում է որակապես: Արդեն առաջ են գալիս նոր աշխարհի ուրվագծերը, որոնք ձեւավորվում են մեր ժամանակաշրջանի հակասությունների եւ լարվածության ներսում:

2011-ն իսկապես դառնում է միտումների հստակեցման տարի. միտումներ, որոնք տանում են դեպի լուրջ սոցիալական, քաղաքական ու տնտեսական փոփոխություններ: Ընդ որում, կատարվող փոփոխությունները, լինելով ոչ շատ երեւացող, այնքան հիմնարար են, որ կարող են համեմատվել մարդկային կեցության վերափոխման փուլերի հետ. նոր տեխնոլոգիաներ, մարդկանց միջեւ համագործակցության նոր ձեւեր, մշակութային ավանդույթների վերափոխում, որոնք առաջին անգամ պատմության մեջ ձեռք են բերում գլոբալ բնույթ:

Այս ամենը հիմք է ծառայում կանխատեսումների եւ հավանական սցենարների համար: Կանխատեսման միջոցով քաղաքագետները փորձում են նվազեցնել ապագայի անորոշության աստիճանը, երբեմն էլ՝ իրենք են փորձում կառուցել այդ ապագան:



Հաճախ կանխատեսումներն արվում են քաղաքական եւ հասարակական գործընթացներն ուղղորդելու նպատակով: Միայն ԱՄՆ-ում շուրջ 600 ուղեղային կենտրոններ աշխատում են տարաբնույթ սցենարների մշակման ուղղությամբ: Սակայն, հարկ է ընդգծել, որ առաջարկվող սցենարներով այդ կենտրոնները, շատ դեպքերում, ապահովում կամ պաշտպանում են որոշակի քաղաքական ուժերի ուղեգիծը: Օրինակ, ամերիկյան որոշ կենտրոններ (հիմնականում՝ աջ պահպանողական ուղղվածության) որպես XXI դարի հիմնական միտում նախանշում են ԱՄՆ եւ ՉԺՀ առձակատումը՝ երկբեւեռ աշխարհակարգի վերստեղծմամբ: Սակայն նույն չին-ամերիկյան հարաբերությունները վկայում են, որ այդ առձակատումը կանխորոշված չէ: Ի տարբերություն ԱՄՆ–ԽՍՀՄ երկբեւեռ աշխարհակարգի, այսօր Ամերիկյան եւ Չինաստանն այնքան են փոխկապակցված, որ ցանկացած լուրջ հակամարտություն կբերի երկուսի համար էլ ծանրագույն հետեւանքների:

Ազատական էլիտայի ներկայացուցիչները պնդում են, որ պատմությունն ընթանում է մեկ ուղղությամբ, եւ որեւէ ուժ, անգամ՝ ամենազոր, չի կարող այն լրջորեն փոխել: Նրանք նշում են, որ մարդուն միշտ էլ հատուկ է սեփական ազատության հաստատումը մնացած բոլոր արժեքների նկատմամբ: Եվ այդ ազատությունը քայլ առ քայլ ընդլայնվել է հարյուրամյակների ընթացքում: Այսպես, շուկան եւ ազատությունը սկզբում տարածվեցին Արեւմտյան Եվրոպայից դեպի Ամերիկա, իսկ հիմա այնտեղից ուղղվում են դեպի Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրներ: Սակայն, ըստ նրանց, դրա հետ մեկտեղ տարածվելու է անկայունությունը, խորանալու են հակամարտությունները, ավելի մեծ թափ է ստանալու ժողովուրդների գաղթը: Շուկայի կամ փողի իշխանությունը դառնալու է համատարած՝ անգոյացման վտանգի առաջ դնելով ազգային պետությունները:

Այս սցենարի իրականացման դեպքում կանխատեսվում է կամ քաոս, կամ կայունացում՝ համաշխարհային կառավարման հաստատմամբ: Առաջինի դեպքում, համաձայն ամերիկյան հայտնի վերլուծաբան Ռոբերտ Կապլանի՝ «ազգային պետությունների հստակ կառուցվածքին փոխարինելու են գալիս տարաբնույթ քաղաք-պետությունները եւ աղոտ ու անիշխան ռեգիոնալիզմը», ամենուրեք տարածվում են մասնավոր բանակները եւ նարկոկարտելները, իսկ «քրեական անիշխանությունը» դառնում է իրական ռազմավարական սպառնալիք:

Մյուս տարբերակը՝ կարգուկանոնի հաստատումն է: Այն ձեւավորվում է բազմազգ կորպորացիաների եւ գլոբալ ֆինանսական շրջանակների շնորհիվ: Նրանք ծառայում են միայն սեփական շահույթի նպատակին եւ միջազգային կազմակերպությունների միջոցով տարածում են իրենց

արժեքները: Համաձայն տվյալ սցենարի, այդ կարգունակոնի ցանցը դանդաղորեն ծածկում է ամբողջ աշխարհը՝ ճնշելով ցանկացած ազգային անկախություն: Այդ ցանցի մեջ ներառվում են Արժույթի միջազգային հիմնադրամը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Համաշխարհային բանկը եւ այլ վերազգային կառույցներ:

Տեսանելի ժամանակաշրջանում համաշխարհային կառավարությունը՝ որպես միասնական, կենտրոնացված համամոլորակային մարմին, դժվար թե ի հայտ գա, սակայն ընդհանուր կառավարելիության երեւույթը դառնում է ավելի ու ավելի իրական: Որպես դրա վառ օրինակ, «կառավարելիության» սցենարի հեղինակները բերում են Եվրոպական միությունը: Այն հիմնվեց որպես ազատ առևտրի գոտի, իսկ այսօր դարձել է բավական կենտրոնացված կառույց: Նշվում է, որ ԵՄ-ի հետքերով է գնում Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:

Ըստ գլոբալ կառավարման գաղափարի պաշտպանների, միջազգային քաղաքական եւ տնտեսական գործընթացներն անշեղորեն տանում են Եվրամիության մոդելի համաշխարհայնացմանը, որը թվում է այսօր ֆանտաստիկ՝ հաշվի առնելով ազգերի մշակութային, կրոնական, լեզվական տարբերությունները եւ շատերի միջեւ գոյություն ունեցող փոխադարձ ատելությունը: Սակայն եթե 60 տարի առաջ որեւէ մեկն ասեր, թե Գերմանիան եւ Ֆրանսիան ունենալու են միասնական տարադրամ, ապա դա պնդողին կարող էին հարցնել. «Իսկ ո՞վ ում կնվաճի»:

Հետաքրքրական է նշել, որ իբրեւ քառսի նշաններ ընկալվող ոչ պետական միավորումները, ինչպես, օրինակ՝ բնապահպանական խմբերը, արհմիությունները, իրավապաշտպան կամ առևտրային միությունները, իրականում նպաստում են կարգունակոնի հաստատմանը, քանի որ յուրաքանչյուրն, իր նեղ ուղղությամբ, մասնակից է միասնական օրենքներ կամ կանոններ հաստատելու գործընթացին: Այսինքն՝ քաղաքական աշխատանքը, ինչպես եւ տնտեսականը, ձեռք է բերում համաշխարհային բաժանման բնույթ:

Պետք է հաշվի առնել, որ ցանկացած ֆուտուրոլոգիական դպրոց ելնում է այն երկրի կամ հասարակության փորձից, որում ձեւավորվել եւ զարգացել է: 40 տարի առաջ Արեւմուտքում Զբիգնեւ Բժեզինսկին կանխատեսում էր կապիտալիստական եւ կոմունիստական համակարգերի փոխկախվածության աճ, որը պետք է բերեր համաշխարհային համակարգի միասնականացմանը: 20 տարի առաջ Ֆրենսիս Ֆուկույաման կանխագուշակում էր արեւմտյան ազատական ժողովրդավարության վերջնական հաղթանակը՝ որպես «պատմության ավարտ»: Այդ ժամանակ Արեւմուտքում խոսում էին ազգայնականության մայրամուտի մասին,

մինչդեռ այսօր Մեծ Բրիտանիայում կամ Գերմանիայում այդ երկրների էլիտան սկսել է խոսել բազմաձևակութայնության ձախողման մասին:

Մոտ երկու տասնամյակ առաջ նույն Բժեզինսկին կանխատեսում էր աշխարհի գլոբալ քաղաքական զարթոնքը: 2011թ. հունվարին նա կրկին խոսեց դրա մասին՝ նշելով, որ այս զարթոնքը սպառնում է գլոբալ էլիտայի դիրքերին եւ պետք է բերի արդյունավետ գործող նոր համաշխարհային կազմակերպությունների առաջացմանը՝ ՄԱԿ-ի փոխարեն:

«Գլոբալ քաղաքական զարթոնքը», այսպիսով, դառնում է «գլոբալիզացիա» եւ «քաղաքակրթությունների բախում» հասկացություններին փոխարինող եզր, թեեւ Բժեզինսկին այն շրջանառության մեջ դրել էր դեռ 1990-ականներին:

Ակնհայտ է, որ ժամանակակից քաղաքական միտքը, բացառությամբ քիչ դեպքերի, ի վիճակի չէ անգամ վաղվա օրվա իրադարձությունները կանխատեսել, ինչի վառ ապացույցն է արաբական աշխարհում վերջին ցնցումների անսպասելիությունը քաղաքագետների մեծամասնության համար:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՔՈՆ ՑԵՂԱԽՈՒՄԲԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ Վերջինիան Զիֆլիօղլու

Հայոց ցեղասպանության տարիներին Շրմաք նահանգում բնակվող բազմամարդ հայկական մի ցեղախումբ, որն իր առաջնորդի՝ Վարդանի անունով կոչվում էր Վարթո, կարողանում է խույս տալ կոտորածից եւ ապաստանել լեռներում: Այնուհետեւ փրկված հայերի այս խումբը մեկուսանալով ամբողջ աշխարհից՝ անասելի պայմաններում սկսում է գոյապայքար, որը տեւում է մի քանի տասնամյակ: Այդ ընթացքում ինքնապահպանման բնազդը դրդում է նրանց խախտել քրիստոնեական արգելքը եւ հարկադրաբար կնքել ներցեղային ամուսնություններ: Միեւնույն ժամանակ, ցեղախմբի անդամները լինում են խիստ կրոնասեր քրիստոնյաներ: Ինչպես հայտնի է, Վարթո ցեղախմբի անդամ է նաեւ Հրանտ Դինքի այրին՝ Ռաքել Դինքը, որի հետ 2009թ. մայիսին Ստամբուլում մեր անձնական զրույցի ժամանակ հարցրինք ներցեղային ամուսնությունների եւ քրիստոնեական արգելքի միջեւ եղած հակասության մասին, ինչին ի պատասխան՝ նա ասաց, թե Պողոս Առաքյալը մի միտք ունի, որի համաձայն՝ ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվում: Ապա հավելելով, որ արյունակիցների միջեւ ամուսնությունների ժամանակ մեծ է հիվանդությունների հավանականությունը, Ռաքել Դինքն ասաց. «Մեր ցեղի մեջ հիվանդ կամ մտավոր հետամնաց մարդիկ չկան, եւ սա մենք համարում ենք Աստծո շնորհ ու նշան, որ մեր ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվել»:

Անհավատալի կերպով գոյատեւած Վարթո ցեղախմբի գոյության մասին Ստամբուլի հայկական համայնքում տեղեկանում են միայն 1960-ականների վերջին, եւ Պոլսո այն ժամանակվա պատրիարք Շնորհք Գալուստյանի ու Հայ Ավետարանական եկեղեցու սպասավոր, պատվելի Հրանտ Գյուզեյանի ջանքերով ցեղախմբի նախ դպրոցահասակ երեխաները, այնուհետեւ ամբողջ ցեղախումբը տեղափոխվում են Ստամբուլ: Իհարկե, հայ հոգեւորականների այս նախաձեռնությունը հանդիպում է թուրքական հատուկ ծառայությունների կոշտ արձագանքին, որոնք ամեն կերպ ցանկանում են խոչընդոտել փրկված հայության բեկորների վերագարթոնքին: Ինչեւէ, շուրջ մեկ տասնամյակ Ստամբուլում անցկացնելուց հետո Վարթո ցեղախումբը որոշում է գաղթել Եվրոպա, եւ այժմ Թուրքիայում նրանցից մնացել է միայն մեկ ներկայացուցիչ՝ Ռաքել Դինքը:

Չարկ է խոստովանել, որ Վարթո ցեղախմբի պատմության շատ մանրամասներ դեռևս լուսարանված չեն, իսկ Եվրոպայում ներկայումս նրանց վիճակի մասին գրեթե տեղեկություն չկա: Այդ առումով խիստ ուշագրավ է թուրքական **Hurriyet Daily News** թերթի հայագոհ լրագրող **Վերջիհան Ջիֆլիօղլուի** 2011 թվականի հունվարին տպագրված հոդվածը, որտեղ պատմում է Եվրոպայում Վարթո ցեղախմբի ներկայիս վիճակի մասին: Ինչպես նշում է Վերջիհանը, վերջերս Մարսելում շուրջ մեկ շաբաթ անցկացրել է Վարթո ցեղախմբի տարբեր ներկայացուցիչների տներում, շփվել նրանց հետ, խոսել տարեց եւ երիտասարդ «վարթոյականների» հետ, ինչի արդյունքում էլ գրել է հետաքրքրական հոդված, որը թուրքերենից թարգմանաբար եւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք ստորև:

**Ռ.Մ.**

Մի ժամանակ հարավարեւելյան Անատոլիայի ամենամեծ ցեղախմբի՝ Վարթոյի (հայերեն՝ Վարդան, քրդերեն՝ Վարթո) անդամներն արդեն Մարսելում եւ Բոյուսելում են: Ցեղախմբի ընդհանուր թիվը Եվրոպայում 1200 հոգի է, կիրառվող լեզուները քրդերենն ու թուրքերենն են: Վարթո ցեղախմբից թուրքիայում մնացել է միայն Ռաքել Դինքը: Նրա հայրը՝ Սիամենթ աղան, Շրնաքի Սիլուպի եւ Ջիզրե գավառներում հազարավոր հեկտարներ հաշվվող հողատարածքների տեր է եղել: Ցեղախումբը, սկսած 1960-ական թվականների վերջից, թուրքիայի Չայոց 82-րդ պատրիարք Շնորիք Գալուստյանի նախաձեռնությամբ խմբերով տեղափոխվում է Ստամբուլ. նրանց թվում են եղել Ռաքել Դինքն ու նրա հայրը՝ Սիամենթ աղան: Վերջինս, ինչպես եւ ցեղախմբի մնացած անդամները, չեն կարողացել վաճառել Շրնաքի իրենց հողերը եւ ստիպված լքելով դրանք՝ տեղափոխվել են Ստամբուլ: Բազմամարդ ցեղախումբը Ստամբուլում հաստատվելուց մի քանի տարի հետո փորձում է փոխադրվել Խորհրդային Չայաստան, սակայն ավելի ուշ՝ 1980-ականների կեսերից սկսած տեղափոխվում է Ֆրանսիայի Մարսել եւ Բելգիայի Բոյուսել քաղաքները: Ինչպես Շրնաքում, այնպես էլ Մարսելում ցեղախմբի շուրջ 500 անդամներ միասին են ապրում իրենց հիմնած երեք ավաններում: Արդեն Ֆրանսիայում մեծացած ցեղախմբի անդամներն ընդգրկված են տարբեր ոլորտներում՝ առևտրից մինչև քաղաքականություն: Չնայած արդեն ներցեղային ամուսնություններ չեն կնքվում, սակայն ավանդույթները դեռևս պահպանվում են, եւ ամուսնության միջոցով ցեղախմբի հետ բարեկամացող հարսները կամ փեսաները պարտավոր են ընդունել ցեղախմբի օրենքները:

Ցեղախմբի ավագ սերնդի ներկայացուցիչներից է վաթսուներեքամյա Ֆիդել Պարզեի Յալիչը, որը Ռաքել Դինքի հորեղբոր տղան է: Պարզեի Յալիչը պատմում է, որ իրենց ցեղը հարյուրավոր տարիներ բնակվել է Շրնաքում եւ հավելում է. «Ժամանակին մենք հարավ-արեւելքի ամենահարուստ ցեղախումբն էինք, հազարավոր հեկտար հողեր ունեինք»: Յալիչը նշում է, որ 1915 թվականին ամբողջ աշխարհի հետ կտրել են իրենց կապերը. «Մենք կարծում էինք, թե աշխարհում բացի մեզնից այլեւս հայ չէր մնացել: Մի քանի հարյուր հոգի էինք եւ այդ պատճառով, չնայած քրիստոնեության մեջ արգելված է, սակայն մեր գոյությունը պահպանելու եւ բազմաճառու համար արյունակից ազգականների միջեւ ամուսնություններ էինք կնքում: Շրնաքի քրդական ցեղախմբերը մեր ամբողջ ունեցվածքը խլեցին մեզնից, մնացինք առանց մի գրոշի, բացի այդ, մեզ ստիպեցին հարկեր վճարել մեր գոյությունը պահպանելու համար, մեր ամեն ինչը յուրացրին, քրդերը մեզ շատ զրկանքներ պատճառեցին»: Յալիչը պատմում է, որ 1915-ից մինչեւ 1968 թվականն ապրել են գետոյական վիճակում եւ միայն 1968 թվականին են իմացել, որ Թուրքիայում, բացի իրենցից, այլ հայեր էլ կան, ինչը նրանց անասելի հուզում է պատճառել: «Օրհան Բաքըր անունով մարդիկ մի երիտասարդ կար, որի ծնողներից մեկը հայ էր, մյուսը՝ ասորի, նա զինվորական ծառայությունը Ստամբուլում էր անցկացրել, այնտեղ գտել էր հայերի եւ իմացել էր Հայոց պատրիարքության մասին, որի հետ էլ կապ հաստատեցինք: Եթե այդ կապը չլիներ, մենք միգրացե մինչեւ այսօր էլ այնտեղ մեկուսի ապրելիս լինեինք»: Յալիչը նշում է նաեւ, որ մինչեւ այդ ժամանակ նրանք չեն ունեցել անգամ ինքնության վկայական եւ իրենք էլ հստակ չգիտեն իրենց տարիքը. «Ավելի ուշ անձը հաստատող վկայականներ տվեցին մեր ցեղախմբի միայն տղամարդկանց, այն էլ՝ զինվորական ստուգման համար»:

Ռաքել Դինքի մեկ այլ ազգականը՝ Սամվել Յաղըրը, հավելում է. «Պատրիարքության հետ կապ հաստատելուց անմիջապես հետո երեխաներին կրթություն տալու նպատակով ցանկացան տանել Ստամբուլ, եւ գնացողների առաջին խմբի մեջ էի, իսկ Ռաքելը՝ երկրորդ: Սակայն իրավական մի խնդիր ծագեց. անվտանգության ուժերը միջամտեցին, երբ տեղեկացան, որ ցեղախմբի երեխաներին սկսել են զանգվածաբար Շրնաքից տանել Ստամբուլ: Ինչեւէ, հարցը թեկուզ դժվարությամբ, սակայն լուծվեց»: Յաղըրը նշում է, որ ցեղախմբի ավագները, հավաքվելով, միահամուռ որոշում են ընդունել՝ թողնել իրենց հողերը Շրնաքում եւ տեղափոխվել. մինչեւ 1977թ. ցեղախումբը լիովին հաստատվում է Ստամբուլում: Ցեղախմբի անդամները միասին բնակություն են հաստատել

Ստամբուլի Շիշլի թաղամասում, որտեղ մեծ թիվ են կազմել պոլսահայերը: Նեղութունները մնացել էին անցյալում, Հայոց պատրիարքությունը ցեղախմբին վերցրել էր իր հովանու տակ, սակայն կրկին Վարթոյի ավագները որոշում են ընդունում փոխել իրենց բնակության վայրը եւ 1978 թվականին Խորհրդային Հայաստան են ուղարկում մի խումբ՝ այնտեղի վիճակն ուսումնասիրելու համար: Սակայն խումբը, վերադառնալով Թուրքիա, հայտնում է, որ կոմունիզմի պատճառով ցեղախմբի համար այդքան էլ հարմար չէ բնակվել Խորհրդային Հայաստանում: Յաղըրը հետեւյալ կերպ է ներկայացնում ցեղախմբի՝ 1980-ականների կեսերին դեպի Ֆրանսիա եւ Բելգիա սկսած արտագաղթի պատճառները. *«Մեր ցեղախմբից մի երիտասարդ 1980թ. զինվորական հեղաշրջման ժամանակ մասնակից էր եղել դեպքերին եւ այնուհետեւ փախել Ֆրանսիա: Երբ մեզնից որեւէ մեկը վտանգի մեջ է լինում, մենք բոլորս միասին համախմբվում ենք նրա կողքին. սրան կարող եք ասել ինքնությունը պաշտպանելու բնագոյ, այնուամենայնիվ, ցեղի ավագները նորից հավաքվելով՝ մի նոր գաղթի ծրագիր մշակեցին, եւ կրկին ճամփա ընկանք: Երկու խմբերով, տարբեր ուղիներով հասանք Մարսել եւ Բրյուսել: Ներկայումս թեկուզ տարբեր երկրներում ենք ապրում, սակայն կրկին միասին ենք եւ միմյանցից տեղյակ ենք»:*

Ցեղախմբի ավելի երիտասարդ սերնդից Կարո Յալիչը (37 տարեկան) Վարթոյից միակն է, ով զբաղվում է քաղաքականությամբ. նա մի քանի տարի առաջ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի կուսակցության անդամ է դարձել եւ մտել քաղաքականության մեջ: Որքան էլ ցեղախումբը Թուրքիայից հեռու է, միեւնույն է, Ռաքել Դինքի հետ կապերն ամուր կերպով շարունակում են: Հենց Ռաքել Դինքի երիտասարդ ազգական Կարո Յալիչն է ջանացել, որպեսզի Ֆրանսիայում Հրանտ Դինքի հետ կապված՝ հիշատակի մի շարք միջոցառումներ կազմակերպվեն եւ Մարսելում մի փողոց անվանակոչվի Դինքի անունով:

Այն հարցին, թե հնարավոր է, որ Վարթո ցեղախումբը մի նոր գաղթի ալիք սկսի, Պարգեւ Յալիչը հետեւյալ պատասխանն է տալիս. *«Ֆրանսիայում եւ Բելգիայում մենք խնդիր չունենք, սակայն մեր սիրտը Հայաստանի կողքին է, մեկ էլ տեսար մի որոշում ընդունենք եւ բոլորս միասին Հայաստան գաղթենք»:*

*Թուրքերենից թարգմանեց  
Ռուբեն Մելքոնյանը*

## **ԻՐԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ Սեւակ Սարուխանյան**

*Թունիսում եւ, հատկապէս, Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունները կարելի էր նշանակություն ունեն իրանի համար: Դրանք կարող են լուրջ փոփոխությունների ենթարկել քաղաքական իրադրությունն ու զարգացումներն արաբական աշխարհում՝ վտանգելով կամ ամրապնդելով իրանի տարածաշրջանային եւ միջազգային դիրքերը:*

Այն բանից հետո, երբ հանրային բողոքի ակցիաները Եգիպտոսում վերածվեցին հակաիշխանական հանրահավաքների, պաշտոնական Թեհրանն աջակցություն հայտնեց Եգիպտական ընդդիմությանը: Իրանի նախագահը, հոգելոր առաջնորդը եւ այլ քաղաքական գործիչներ իրենց կոչերում Եգիպտացիներին հորդորում էին տապալել Յ.Մուբարաքի իշխանությունը, որին Թեհրանը մեղադրում է իսրայելա-ամերիկամետ քաղաքականություն վարելու եւ հակաիսլամական բնույթ ունենալու մեջ: Յոգելոր առաջնորդ Ա.խամենեյի փետրվարի 4-ի ուղերձի հիմնական տոնայնությունն այն էր, որ Եգիպտոսում կատարվող Աստծո կամքով է եւ իր բնույթով հիմնված է իսլամի ու բարոյականության վրա, որի նպատակն է ազատվել ներկայիս Եգիպտական ղեկավարությունից՝ հանուն իսլամական վերածննդի: Նույն օրը Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նախկին ղեկավար Ռ.Սաֆավին հայտարարեց, որ Եգիպտական հեղափոխությունն իրանի իսլամական հեղափոխության բնական շարունակությունն է, եւ Իրանը պատրաստ է աջակցել դրան:

Չնայած իրանական կողմի ջերմ արձագանքին, Եգիպտական ուժերը Թեհրանի ակտիվացումը չողջունեցին: Փետրվարի 7-ին «Մուսուլման եղբայրներին» պատկանող IkhwanWeb կայքում հրապարակվեց կազմակերպության պատասխանը Ալի խամենեյին, որտեղ նշվեց, որ Եգիպտական հեղափոխությունն իսլամական չէ, այլ մահմեդականների, քրիստոնյաների, բոլոր կրոնների հեղափոխություն է՝ հանուն ազատության: Այս պատասխանը նշանակալից է ոչ թե նրանով, որ բնութագրում է հեղափոխական ալիքի ուղղվածությունը եւ դրա իսլամական չլինելու բնույթը, այլ այն, որ Թեհրանը ներկայիս Եգիպ-



տոսում չունի ոչ մի լուրջ գործընկեր, որը պաշտպանում է իրանական շահերը:

Իշխանափոխությունը Եգիպտոսում Իրանի համար կարող է դառնալ իր նշանակությամբ կարելորագույն զարգացումն արաբական աշխարհում՝ Սադամ Յուսեյնի տապալումից հետո: Իրանի իսլամական հեղափոխությունից հետո Թեհրանի հարաբերությունները Կահիրեի հետ երբեք լավ կան անգամ նորմալ չեն եղել: Եգիպտոսն ԱՄՆ կարելոր դաշնակիցն է տարածաշրջանում, Իսրայելի անվտանգ գոյության անուղղակի գրավականներից մեկը, իսկ Յ.Մուբարաքը մինչեւ վերջերս ամենահաջողված արաբ աշխարհիկ առաջնորդն էր, որի կառավարման ընթացքում Եգիպտոսը խուսափել է պատերազմներից, ապահովել կայուն տնտեսական աճ եւ վերածվել համաշխարհային զբոսաշրջային եւ մշակութային կենտրոնի: Չնայած Մուբարաքի իշխանությունը միշտ եղել էլ կոռումպացված եւ ավտորիտար, բայցեւայնպես իր քաղաքականությամբ կարողացել է խուսափել ներքին անհանգստություններից եւ հավասարակշռել ամերիկյան, խորհրդային-ռուսական, արաբական, եվրոպական եւ վերջին շրջանում՝ նաեւ չինական շահերը: Այս բոլոր հատկանիշներով եւ հաջող հակաիսլամիստական քաղաքականությամբ Եգիպտոսն աշխարհագաղափարական իմաստով Իրանի հակապատկերն է հանդիսացել: Թեհրանը 1979-ից հետո ընթացել է այլ ճանապարհով, որի անկյունաքարն է եղել գերտերությունների հետ հակամարտության շնորհիվ մահմեդական աշխարհում առաջնորդի դեր զբաղեցնելը եւ տարածաշրջանային հակամարտություններում ուղղակի եւ անուղղակի մասնակցությամբ սեփական դիրքերն ամրապնդելը:

Այս ֆոնին, Մուբարաքի հրաժարականն Իրանի համար, գաղափարական եւ բարոյական տեսակետից, ձեռնտու հանգամանք էր, որի արդյունքում տապալվեց իսլամական աշխարհում հաջողակ աշխարհիկ իշխանության սիմվոլներից մեկը:

Սակայն Եգիպտոսում տեղ գտած զարգացումները կարող են նաեւ կոնկրետ տարածաշրջանային նշանակություն ունենալ Թեհրանի համար:

### **Նոր անկայունության գոտի**

Ակնհայտ է, որ Մուբարաքի հեռացումով Եգիպտոսում հիմք դրվեց անկայունության, որի պահպանմանը նպաստելու է երեք կարելոր հանգամանք.

❖ Եթե Մուբարաքից հետո իշխանությունն անցնի նրա յուրային եւ Արեւմուտքի համար ընդունելի Օմար Սուլեյմանին, ապա իրավիճակը

երկրում դժվար կլինի կայունացնել, քանզի հասարակության մեջ վերջինիս հեղինակությունն այնքան էլ բարձր չէ:

❖ Եգիպտական լեգալ ընդդիմությունը դեռևս ձեւավորման փուլում է գտնվում, իսկ «Մուսուլման եղբայրները» նոր են մուտք գործում պաշտոնական եւ լեգիտիմ ընդդիմության դաշտ: Հայտնի չէ, թե ինչի կհանգեցնի ընդդիմության բյուրեղացման գործընթացը, եւ ինչպես այն կազդի Եգիպտոսի կայունության վրա:

❖ Եգիպտոսի ներքաղաքական կյանքի ազատականացումն ու ժողովրդավարական մեխանիզմների կիրառումը հնարավորություն են տալու իսլամական աշխարհին եւ արտաքին այլ ուժերի ներգրավվել ներեգիպտական զարգացումներում, ինչը Մուբարաքի իշխանության տարիներին գրեթե անհնար էր:

Այս հանգամանքները թույլ չեն տա Եգիպտոսին հաղթահարել քաղաքական ճգնաժամը կարճաժամկետ եւ միջնաժամկետ կտրվածքով, այնպես, ինչպես դա Իրանին չհաջողվեց 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո: Ահաբեկչական ակտերից եւ արյունալի քաղաքական պայքարից տառապող Իրանը 1979–1981թթ. վերապրեց խոր ճգնաժամ, որը կարող էր դեռ երկար շարունակվել, եթե իշխանությունները, օգտագործելով իրանա-իրաքյան պատերազմը, չխեղդեին պետությունը կազմալուծող գործընթացները: Նման սցենար Եգիպտոսում հազիվ թե կիրառելի լինի, ինչն այս խոշորագույն արաբական պետությունը վերածելու է տարածաշրջանային նոր հակամարտությունների կենտրոնի: Նման հեռանկարն Իրանի համար առավել քան ձեռնտու է, քանի որ Թեհրանի դեմ տրամադրված հիմնական ուժերը՝ Իսրայելն ու Միացյալ Նահանգները, Իրանի միջուկային զենքի ստեղծման կասեցմանն ուղղված գործունեության փոխարեն, ներառյալ՝ հնարավոր ռազմական հարվածն Իրանին, կենտրոնանալու են Եգիպտական կարգավորման գործընթացի վրա:

Այս տեսանկյունից կարելի է սպասել, որ Իրանը հնարավոր ողջ ներուժը դնելու է, որպեսզի երկարաձգի նման կարգավորումը. ճիշտ այնպես, ինչպես Իրանն այսօր գործում է Իրաքում: Նաեւ հարկ է նշել, որ քաղաքական ճգնաժամը Եգիպտոսում, ի տարբերություն իրաքյան ճգնաժամի, Իրանի համար լուրջ սպառնալիք չի ներկայացնում, եւ դժվար թե Եգիպտական անկայունության «դոմինոյի էֆեկտը» հասնի Իրանին:

### «Դոմինոյի էֆեկտը»

«Դոմինոյի էֆեկտի» տեսանկյունից՝ Իրանի համար կարելու է եզրահանգել «իսլամական» եւ «ժողովրդական հեղափոխության» հնարավոր տեղաշարժը դեպի Մերձավոր Արեւելքի եւ Ծոցի երկրներ: Նման հեռանկարը, այդ թվում նաեւ տարածաշրջանի իսլամականացումը, Իրանին ամենեւին ձեռնտու չէ: Հակաիշխանական իսլամիստական շարժումները տարածաշրջանում ուժեղ են Իրանի ռազմավարական գործընկեր Սիրիայում, որտեղ ծայրահեղական սուննի-իսլամիստական ուժերը հիմնականում կապված են «Ալ-Ղաիդայի» հետ եւ նպատակ ունեն տապալել ներկայիս սիրիական աշխարհիկ իշխանությունը: Նման հեռանկարն Իրանի համար բոլորովին ցանկալի չէ, քանի որ դրա արդյունքում Թեհրանը կկորցնի իր կարելու գործընկերոջն ու դաշնակցին եւ դրա փախարեն կստանա առավել հակաիրանական եւ հակաշիական իշխանություն Սիրիայում: Իրանին ձեռնտու չէ նաեւ «իսլամական վերածնունդն» այլ արաբական երկրներում: Այնպես է ստացվել, որ «իսլամական վերածնունդի» կողմնակից արաբական կազմակերպությունների մեծ եւ ամենից ակտիվ մասը հակաիրանական ու հակաշիական տրամադրություններ ունի:

Փաստորեն, Իրանի համար ձեռնտու է.

ա. Եզրայտոսի հետագա ապակայունացումը,

բ. ճգնաժամի պահպանումը բուն Եզրայտոսի տարածքում:

Որքան էլ տարօրինակ թվա, բայց առնվազն երկրորդ կետով Իրանի շահերը համընկնում են Իսրայելի եւ Միացյալ Նահանգների շահերին, որոնք, ճգնաժամի չհաղթահարվելու դեպքում, փորձելու են այն առավել կառավարելի պահել եւ թույլ չտալ դրա հետագա տարածումն արաբական աշխարհում:

### Իրանա-ադրբեջանական հարաբերությունների սրումը

Թունիսում եւ Եզրայտոսում հակաիշխանական շարժումներից գրեթե անմիջապես հետո Ադրբեջանում սկսվեց հակաիրանական քարոզարշավ, որը վերջին շաբաթներին հիշեցնում է իսկական հիսթերիա: Հաշվի առնելով այն, որ այս արշավին մասնակցում են գրեթե բոլոր պետական լրատվամիջոցները, կարելի է ասել, որ այն

պետության կողմից ուղղորդվող գործողությունների շարք է: Հակահրանական քարոզչությունում հիմնականում օգտագործվում է հայհրանական համագործակցության փաստը, սակայն երկրորդ կամ երրորդ տողով նշվում է, որ թեհրանը խառնվում է Ադրբեջանի ներքին գործերին եւ պաշտպանում տարբեր կազմակերպությունների Ադրբեջանում:

Ամենայն հավանականությամբ, «իսլամական վերածնունդը» Հյուսիսային Աֆրիկայում լուրջ անհանգստություն է առաջացրել Ադրբեջանում: Այս առումով, առաջիկա ամիսներին Ադրբեջանում պետք է սպասել Իրանի հետ առնչություն ունեցող կրոնական կազմակերպությունների դեմ արշավի, ինչն, իր բնույթով, բավական լուրջ ապակայունացնող լիցք կարող է հաղորդել ադրբեջանական հասարակական-քաղաքական կյանքին՝ միեւնույն ժամանակ վնասելով թեհրանի հետ Բաքվի հարաբերություններին:

## **ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ Հայկ Գաբրիելյան**

Սույն թվականի հունվարի 31-ին տեղի ունեցավ Թուրքիայի Նախարարների խորհրդի նիստ՝ վարչապետ Էրդողանի գլխավորությամբ, որը նվիրված էր արտաքին քաղաքականության խնդիրներին եւ, մասնավորապես, արաբական աշխարհի վերջին զարգացումներին: Նիստում փոխվարչապետ Ջեմիլ Չիչեքը հայտարարեց. «Մենք անհանգստացած ենք Թունիսում ու Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունների համար: Եգիպտոսի ժողովուրդը ցանկանում է այնպիսի ժողովրդավարություն, ինչպիսին որ Թուրքիայում է: Եթե արաբական երկրներում ողջ իշխանությունը կենտրոնացված է միայն մեկ անձի ձեռքում, ապա Թուրքիայում տիրում է հստակ ժողովրդավարական համակարգ, որը բոլոր քաղաքական ուժերին հնարավորություն է ընձեռում մասնակցելու երկրի հասարակական-քաղաքական կյանքի գործընթացներին: Թուրքիայում անցկացվող ընտրությունները խնդիրներ չեն հարուցում ո՛չ երկրի ներսում, ո՛չ էլ երկրից դուրս»:

Իսկ փետրվարի 1-ին նախագահ Գյուլը հայտարարեց. «Թուրքիան պատմական կապեր ունի իսլամական երկրների հետ: Մենք ուշադիր հետեւում ենք Եգիպտոսում ընթացող իրադարձություններին: Կարծում են, որ պետք է հաշվի առնվեն Եգիպտական ժողովրդի պահանջները եւ հնարավորության դեպքում շուտ վերջ տրվի այդ քառսային իրավիճակին: Եգիպտոսն այդ իրավիճակից պետք է դուրս գա առավել ուժեղ, քան դրանից առաջ էր»:

Նույն օրը Էրդողանն իր գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցության ժողովում Եգիպտոսի նախագահ Մուբարաքին կոչ արեց կատարել ցուցարարների պահանջները. «Ոչ մի պետություն չի կարող գոյատևել հակառակ իր ժողովրդի կամքի: Մենք բոլորս մահկանացուներ ենք, բոլորս էլ մահանալու ենք, եւ մեզ պետք է դատեն ըստ մեր թողած ժառանգության»:

Իսկ փետրվարի 2-ին Էրդողանն արդեն Ղրղզստանում հայտարարեց. «Աշնանը կայանալիք նախագահական ընտրությունների ժամանակ Մուբարաքը պարտավորվել է այլեւս չառաջադրել իր թեկնածությունը, սակայն այդ հայտարարությունը բավարար չէ, անհրաժեշտ է, որ նա այլ քայլեր ձեռնարկի: Այս վարչակազմը վստահություն չի ներշնչում,

անհրաժեշտ է ներկայացնել «ճանապարհային քարտեզ»: Ժողովուրդը Մուբարաքից ավելին է սպասում»:

Անշուշտ, թուրքական կողմի հայտարարությունները պայմանավորված են եգիպտա-իսրայելական ջերմ հարաբերություններով, ինչպես նաև նրանով, որ Եգիպտոսը Թուրքիան դիտարկում է որպես մրցակից իսլամական աշխարհում:

Գյուլի ու Էրդողանի խոսքերն անարձագանք չմնացին եգիպտական կողմից: Արդեն փետրվարի 3-ին Եգիպտոսի արտգործնախարարության խոսնակ Յուսսամ Ջեքին անընդունելի համարեց իշխանափոխության մասին միջազգային հանրության հղած կոչերը՝ ընդգծելով, որ դրանք բորբոքում են երկրում առկա լարված իրավիճակը. «Տխուր է տեսնել, թե ինչպես են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ անգամ Թուրքիան փորձում միջամտել Եգիպտոսի ներքին խնդիրներին: Դրա փոխարեն՝ նրանք թող զբաղվեն իրենց ներքին խնդիրներով»:

Փետրվարի սկզբին ֆրանսիական «AFP» լրատվական գործակալությունը նշեց, որ Թուրքիան ձգտում է Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունները ծառայեցնել իր տարածաշրջանային դերի ամրագրմանը, իսկ հունական «Imerisia» թերթը գրեց, թե արաբական աշխարհի ճգնաժամը շատ հարմար պահ է Էրդողանի համար. «Արաբական աշխարհի զարգացումներն Էրդողանին մեծ հնարավորություններ են ընձեռում նոր միջնորդական առաքելությամբ հանդես գալու համար: Այդ մասին է վկայում նաև այն, որ օրեր առաջ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երկար հեռախոսազրույց է ունեցել Էրդողանի հետ եւ կարելուրել արաբական աշխարհում ստեղծված իրավիճակի քննարկումը հենց Թուրքիայի հետ: Թուրք-իսրայելական հարաբերությունների կտրուկ սրումից հետո սա առաջին դեպքն է, որ Մերձավոր Արևելքում հանընկնում են Անկարայի ու Վաշինգտոնի մոտեցումները: Օբաման Էրդողանին հայտնել է, թե խոչընդոտներ չի հարուցի, եթե վերջինս արաբական աշխարհում առաջացած ճգնաժամի հարթման համար առաջարկի իր միջնորդական առաքելությունը»:

Ի դեպ, փետրվարի 2-ին ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Քեթրին Էշթոնն, իր հերթին, հեռախոսազրույց ունեցավ Ահմեթ Դավութօղլուի հետ՝ նույնպես քննարկելով արաբական աշխարհում տեղի ունեցած վերջին իրադարձությունները: Դրա հաջորդ օրը Դավութօղլուն հատուկ առաքելության շրջանակներում մեկնեց Կատար՝ քննարկելու Եգիպտոսում ու Լիբանանում տիրող իրավիճակը:

«Turksam» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Սերդար Էրդուրմազի կարծիքով՝ վերջին շրջանում Եգիպտոսում

տեղի ունեցած զարգացումները դրականորեն են ազդում Թուրքիայի վրա, քանի որ Իսրայելը՝ ի դեմս Եգիպտոսի, կարող է կորցնել իր միակ տարածաշրջանային դաշնակցին. «Բացի այդ, Թուրքիան աշխարհիկ ու դեմոկրատական ռեժիմ ունեցող երկիր է, որը սերտ կապեր ունի նաև Մերձավոր Արևելքի երկրների հետ, ինչն ԱՄՆ-ի ու ԵՄ-ի աչքում էլ ավելի է կարեւորում նրա դերը: Այստեղ փոքր դեր չի խաղում նաև Իսրայելի մեկուսացված վիճակը տարածաշրջանում: Այս ամենը նշանակում է, որ Արեւմուտքի աչքում Թուրքիայի ռազմավարական կարեւորությունն այժմ ավելի մեծ է, քան Սառը պատերազմի ժամանակ էր»:

«Turksam»-ի մեկ այլ փորձագետ՝ Ջելալեթթին Յավուզը կարծում է, որ արաբական աշխարհի վերջին զարգացումները Թուրքիայի վրա բացասական ազդեցություն, հիմնականում, չեն ունենա. «Բացառություն կարող է լինել նավթի ու բնական գազի գնի հնարավոր բարձրացումը, ինչպես նաև՝ Թուրքիայի հետ վիզային ռեժիմ չունեցող արաբական երկրներից վտարանդիների ներհոսքը Թուրքիա, ինչն իր հերթին կարող է վերածվել ներքին սպառնալիքի»:

Ներկայումս անգամ նշվում է, որ եթե Եգիպտոսի անկայուն իրավիճակը ձգձգվի, ապա դա կարող է դրականորեն ազդել Թուրքիայի զբոսաշրջության վրա: Դա հատկապես վերաբերում է ռուս զբոսաշրջիկներին, որոնք նախընտրում են այցելել այնպիսի երկրներ, որոնց հետ չի գործում վիզային ռեժիմը (ինչպիսիք են նաև Եգիպտոսն ու Թուրքիան):

Յունվարի կեսերին ամերիկյան «The New York Times» թերթը գրեց, որ մերձավորարևելյան տարածաշրջանում աճում է Թուրքիայի միջնորդական դերը. «Մինչ ԱՄՆ-ը անհույս հետեւում է մերձավորարևելյան զարգացումներին, Թուրքիան հարցեր է լուծում: Թուրքիան բանակցային գործընթացում վերածվել է ամենադինամիկ երկրի: Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան չկարողացան ազդեցություն ունենալ տարածաշրջանային խնդիրների կարգավորման վրա, իսկ ահա Թուրքիան, Իրանը եւ Կատարը վերջին տարիների ընթացքում վերածվել են «աճող ուժի»: ԱՄՆ-ը տարիներ ի վեր խնդիրների լուծումը փնտրել է իր թշնամիներին տարածաշրջանում մեկուսացնելու մեջ: Մինչդեռ տվյալ գործընթացում Թուրքիայի հաջողության բանալիներից մեկը հանդիսանում է ամերիկյան այդ մեթոդի քննադատությունը: Քանի դեռ հակառակը չի ապացուցվել, Թուրքիան շարունակելու է տարածաշրջանում կարգուկանոնի հաստատման գործում հանդիսանալ անփոխարինելի երկիր»:

Հիշեցնենք, որ վերջին տարիներին Թուրքիան, մասնավորապես, իր միջնորդությունն է առաջարկել Իսրայելին ու Սիրիային, Սիրիային ու Իրաքին, Իրանին ու Արեւմուտքին, Իրանին ու Պակիստանին, Աֆ-

ղանստանին ու Պակիստանին, Պաղեստինին ու Իսրայելին, պաղեստինյան «Ֆաթհ» եւ «Համաս» կազմակերպություններին:

Քրոունի մերձավորարեւելյան հետազոտությունների կենտրոնի եւ գերմանական Մարշալի հիմնադրամի փորձագետ Ջոշուա Ուոլքերը «Foreign Policy» ամսագրում գրում է. «Թուրքիան աստիճանաբար վերածվում է մերձավորարեւելյան առանցքային դերակատարի եւ միջազգային խաղացողի: Թուրքիան Մերձավոր Արեւելքում ունի ամենամեծ եւ ամենաարագ զարգացող տնտեսությունը: Արաբական աշխարհի վերջին զարգացումները կարող են հանգեցնել նրան, որ նոր ձեւավորվող կառավարությունների համար Թուրքիայի ներկայիս մոդելն օրինակելի դառնա: Թուրքիան օսմանյան ժամանակաշրջանից սկսած դիվանագիտական, տնտեսական ու քաղաքական առումով երբեք այսքան ակտիվ չի եղել արաբական աշխարհում եւ այսքան ազդեցություն չի ունեցել նրա վրա»:

Դեռեւս 2010 թվականի սեպտեմբերին Թուրքիայի տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (TESEV) հարցախույզ անցկացրեց մերձավորարեւելյան 8 (Եգիպտոս, Հորդանան, Լիբանան, Պաղեստին, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Իրաք, Իրան) երկրներում: Մասնակիցների մոտ 66%-ի կարծիքով՝ Թուրքիան ողջ տարածաշրջանի համար կարող է ծառայել որպես մոդել երկիր, քանի որ այն ժողովրդավարության ու իսլամի հաջող խառնուրդ ներկայացնող երկիր է: Սա վկայում է, որ Թուրքիայի հեղինակությունն արագորեն աճում է արաբական աշխարհում. դրանից մեկ տարի առաջ անցկացված հարցախույզի մասնակիցների 61%-ն էր Թուրքիան դիտարկել որպես մոդել երկիր:

Հարցախույզը վկայում է, որ արաբական աշխարհում զգալիորեն ավելացել է Թուրքիայի համակիրների թվաքանակը: Դա նշանակում է, որ արաբական աշխարհը նաեւ հավանության է արժանացնում Թուրքիայի միջնորդական առաքելությունը: Հարցախույզի մասնակիցների 75%-ը նշել է, թե Թուրքիան դրականորեն է ազդում մերձավորարեւելյան խաղաղ գործընթացի վրա:

Անկարայի Մերձավորարեւելյան տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Մելիհա Ալթունը շըքն անհնարին է համարում այն, որ արաբական երկրները կարող են կրկնօրինակել թուրքական մոդելը, փոխարենը՝ նրանք կարող են օգուտ քաղել Թուրքիայի քաղաքական ու տնտեսական փորձից:

Այսպիսով, արաբական աշխարհի վերջին զարգացումները նոր հնարավորություններ են բացում Թուրքիայի առջև՝ տարածաշրջանային իր դերի կարելորման եւ միջազգային վարկի բարձրացման համար: Միեւնույն ժամանակ, այդ զարգացումները, հազիվ թե, կարողանան ազդել Թուրքիայի ներքաղաքական կյանքի վրա:



## **ՎԵՐՆԱԽԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ *Սուրեն Մանուկյան***

2010թ. վերջին եւ 2011թ. սկզբին արաբական պետությունների ներքին կայունության երկարատեւ շրջանը խաթարվեց: Սոցիալական վերջին հուզումները բարձրացրին արաբական աշխարհի քաղաքական վերնախավերի անխուսափելի փոփոխման հրամայականը:

Տարածաշրջանի քաղաքական էլիտան ձեւավորվել է մի քանի տասնամյակ առաջ՝ անցնելով անկախության համար պայքարի եւ ռազմական հեղաշրջումների ճանապարհով: Թունիսի արդեն նախկին նախագահ Ձին ալ-Աբիդին բեն Ալին երկիրը ղեկավարում էր 24 տարի (1987-ից): Եգիպտոսի հեռացած նախագահ Հոսնի Մուբարաքն այդ պաշտոնը զբաղեցնում էր 30 տարի (1981-ից): Հաջորդ ղեկավարը, ով խոստացել է այլեւս չերկարածգել սեփական իշխանությունը, 33 տարի (1978-ից) իշխանության գագաթին գտնվող Եմենի նախագահ Ալի Աբդալահ Սալեհն է: Լիբիայի առաջնորդ Մուամար Քադաֆին իշխանության գլուխ է 42 տարի (1969-ից), Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրը՝ 18 տարի (1993-ից), իսկ Սիրիայում իշխանությունը 41 տարի (1970-ից) գտնվում է ալ-Ասադների ընտանիքի ձեռքում:

### **Արաբական փողոցը**

«Արաբական փողոց» հասկացությունը բնորոշում է մի երեւույթ, որը դժվարությամբ է ընկալվում Արեւմուտքում: Նրա միջոցով է արտահայտվում բնակչության հավաքական կարծիքը տարբեր իրադարձությունների վերաբերյալ: Նույնիսկ ծայրահեղ բռնապետական իշխանությունները չեն կարող անտեսել արաբական փողոցի դիրքորոշումը: Ազատ ընտրությունների բացակայության պայմաններում հենց արաբական փողոցի դրական վերաբերմունքն է լեգիտիմություն հաղորդում արաբական առաջնորդներին: Պատահական չէ, որ վերջինները միշտ էլ փորձել են բավարարել փողոցի հիմնական պահանջներն ու սիրաշահել նրան:

Ժողովրդական ելույթները, որոնք բռնկվեցին մի շարք արաբական երկրներում 2010-ի վերջին եւ 2011-ի սկզբին, ցույց տվեցին, որ իշխանությունները կարծես մոռացել են այդ ճշմարտությունը եւ անտեսել

արաբական փողոցի նշանակությունը: Թերեւս, քչերն էին հավատում, որ անտարբերության (թվացյալ) մեջ գտնվող փողոցը կդառնա այնքան զորեղ, որ մի ամսում պաշտոնանկ կանի Բեն Ալիին ու Սուբարաքին, ինչպես նաեւ կսպառնա Ալժիրի, Եմենի, Սիրիայի ու Չորդանանի իշխանություններին:

Արաբական աշխարհում «փողոցային» քաղաքականությունը երկար պատմություն ունի: Սիրիայում, Իրաքում, Չորդանանում, Լիբանանում եւ Եգիպտոսում 1950-ականներին այն կառավարություններ էր փոխում եւ էականորեն ազդում արտաքին քաղաքական կուրսի ընտրության վրա: Չետագայում արաբական փողոցի ներուժը նվազեց, սակայն նույնիսկ ամենավտորիտար իշխանությունների ժամանակ աշխատավորների, կանանց եւ ուսանողների սոցիալական բողոքները, դասադուլներն ու հանրահավաքներն էական գործոն էին մնում:

Առաջին պաղեստինյան ինքիֆադայից ի վեր (1987-1993) արաբական փողոցի հիմնական կարգախոսները դարձան հակաիսրայելական եւ հակաարեւմտյան: Պաղեստինի ազատագրման խնդիրը, Աֆղանստան եւ Իրաք ամերիկյան ներխուժումն արժանացան փողոցի զայրույթին:

Սակայն փողոցն արդեն այլ էր՝ նոր հայացքներով, գործելաոճով: Աղքատացած միջին խավի ներկայացուցիչներից, ուսանողներից, ուսուցիչներից, իրավաբաններից ու լրագրողներից բաղկացած շարժումները հետզհետե կենտրոնացան ներքին խնդիրների վրա: 2004թ. «Կիֆայա» (Բավ է) շարժումը Եգիպտոսում պահանջեց վերացնել Արտակարգ դրությունը, ազատ արձակել քաղբանտարկյալներին, վերջ դնել բռնություններին: 2005թ. Մայրիների հեղափոխության արդյունքում սիրիական ուժերը դուրս բերվեցին Լիբանանից: 2009թ. իրանական հետընտրական ելույթներն, իրենց հերթին, ցույց տվեցին, թե ինչպես կարելի է կազմակերպել այս գործընթացները ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Փողոցը սկսեց ավելի ակտիվ կերպով օգտագործել տեղեկատվական դարաշրջանի նվաճումները (էլեկտրոնային փոստը, Facebook-ը, YouTube-ը, Twitter-ը եւ արբանյակային հեռուստատեսությունը, հատկապես՝ ալ-Ջազիրան):

Փոխվել էր նաեւ բողոքի սոցիալական կառուցվածքը. կրթության լայն տարածումը, քաղաքային բնակչության ավելացումը մեծացնում են ակտիվ քաղաքացիական կեցվածք ունեցող մարդկանց թիվը: Համալսարանների «արտադրած» հարյուր հազարավոր շրջանավարտները, որոնք ի հեճուկս իրենց բարձր կրթական մակարդակի, դատապարտված են գործազրկության, Մերձավոր Արեւելքի համար դառնում են նոր պրոլետարիատ՝ հունք հեղափոխությունների համար: Վերջին ելույթների

ընթացքում նրանք հրկիզում էին ոստիկանական մեքենաները, իշխող կուսակցության գրասենյակները, բարիկադներ կառուցում: Սկզբնական շրջանում ելույթները սոցիալական էին: Հագարավոր գործազուրկ երիտասարդներ ու արհմիությունների անդամներ վանկարկում էին. «Աշխատանքը՝ մեր իրավունքն է» եւ պահանջում իջեցնել առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Հետագայում սոցիալական այս կարգախոսները փոխարինվեցին կառավարության հրաժարականի պահանջներով եւ վերաճեցին քաղաքական պայքարի: Իսկ այս պայքարը պետք է գլխավորեր քաղաքական ընդդիմությունը:

### **Ընդդիմությունը**

Ընդդիմադիր կուսակցություններն արաբական երկրներում չափազանց թույլ են: Նրանք վատ կազմակերպված են, չունեն լուրջ ֆինանսական ներուժ եւ սեփական սոցիալական բազան ընդլայնելու հնարավորություններ: Այս առումով չափազանց դժվար է նշել այն ուժերը, որոնք կարող են գլխավորել հակակառավարական ելույթները եւ ներկա էլիտայի հեռացման հնարավորության դեպքում՝ իշխանության գալ: Ավելի խիստ ասած, նույն Եգիպտոսում քաղաքական ընդդիմություն՝ որպես այդպիսին, այսօր չկա: Կա զանգվածային շարժում՝ առանց հստակ քաղաքական ծրագրի եւ ընդգծված առաջնորդի: Հիմնական նախաձեռնող համարվում է մի քանի երիտասարդներից կազմված խումբը, որը ձեւավորվել է Facebook սոցիալական ցանցի միջոցով եւ ինքնանվանվել «Ապրիլի 6-ի շարժում»: Հետաքրքիր է, որ այդ շարժումն իր ստեղծման պահից մի քանի անգամ փորձել էր կազմակերպել Եգիպտոսում համընդհանուր գործադուլ, սակայն անհաջողության մատնվել: Բայց հունվարի 25-ին ոգելորդվելով թունիսյան օրինակով՝ նրանք կարողացան Եգիպտոսում նոր ընդվզումների խթան դառնալ: Շարժման պտուղներն անմիջապես փորձեցին քաղել այլ քաղաքական ուժեր:

Ավանդական կուսակցություններից մի քանիսն արդեն հայտարարել են շարժմանը միանալու մասին, սակայն խոսել գործընթացների վրա նրանց էական ազդեցության մասին՝ չի կարելի: Չափազանց ակտիվ է Նոբելյան մրցանակակիր Մոհամեդ ալ-Բարադեյը, որին հարգում են երկրում, սակայն չեն ընկալում իբրեւ առաջնորդ, քանի որ նա երկար տարիներ հեռու է գտնվել եգիպտական իրականությունից եւ ունի Արեւմուտքի մարդու համբավ, ինչը բացասաբար է ընդունվում: Իսկ ահա 2005թ. նախագահական ընտրություններին Մուբարաքի հակառակորդ Այման Նուրը միանշանակ չի ընդունվում հասարակության կողմից՝ հենց

եզիպտական քաղաքականության մեջ վաղուց ներգրավված, հետևաբար՝ վարկաբեկված լինելու պատճառով:

Սակայն կա եւս մեկ պայքար, որն ավելի քողարկված է, բայց առանց որի արաբական ընդվզումները կարող էին չհասնել նման թեժության: Իշխանությունները թունիսում, Եգիպտոսում, Եմենում անտեսել էին ոչ միայն փողոցի պահանջները, այլ նաեւ չէին բավարարել որոշ քաղաքական եւ տնտեսական էլիտաների հավակնությունները: Արեւելքում տնտեսական բարիքների վերաբաշխումը որոշակի տրամաբանության է ենթարկվում: Տարբեր ազդեցության խմբեր, քաղաքական ուժեր, կլաններ եւ էթնոդավանական խմբեր ստանում են պետական համակարգում որոշակի մասնաբաժին՝ պաշտոնների եւ տնտեսական լծակների վերահսկողության փոխանցման միջոցով: Ներկա փուլում ընթացող գործընթացները նաեւ այլընտրանքային էլիտաների պահանջ են՝ կիսվել իշխանությամբ եւ տնտեսական բարիքներով: Սրա մասին են վկայում նաեւ բողոքի գործողությունների մասնակիցների կարգախոսները: Բողոքը հիմնականում ուղղված է անձանց դեմ, որոնք խախտել են խաղի կանոնները եւ կորցրել կապն իրականության հետ: Այս առումով կարելի է սպասել, որ արաբական երկրներում տեղի կունենան որոշակի «ժողովրդավարական» զիջումներ, որոնք կընդլայնեն որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցողների շրջանակը:

Այս պայմաններում միակ ուժը, որ կարող է այլընտրանքային քաղաքական վերնախավ կոչվել, իսլամականներն են: Առաջին օրերին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը չէր մասնակցում Եգիպտոսում բողոքի ցույցերին, սակայն հետագայում միանալով դրանց՝ սկսեց զգույշ, բայց հետևողական աշխատանքը: Երբ իշխանությունները կասեցրին ինտերնետի աշխատանքը երկրում, տեղեկատվության հիմնական տարածման աղբյուր դարձան մզկիթները: Այդ օրերին Եգիպտոս վերադարձավ ազդեցիկ իսլամական քարոզիչ Ամր Խալեդը (իմիջիայլոց, նմանապես թունիս վերադարձավ թունիսյան արմատական իսլամի գլխավոր գաղափարախոս Ռաշիդ Ղանուշին): Հետզհետե իսլամական կարգախոսները սկսեցին ավելի բարձր հնչել, իսկ փողոցը սկսեց ստանալ իսլամիստական, հակամերիկյան եւ հակաիսրայելական բնույթ. «Ոչ՝ Մուբարաքին, ոչ՝ Սուլեյմանին, մենք կուշտ ենք ամերիկացիներից»:

2005թ., երբ Մուբարաքը մասնակի ազատ ընտրություններ անցկացրեց, «Մուսուլման եղբայրների» կողմից աջակցություն վայելող թեկնածուները ստացան բոլոր մրցակցային տեղերը խորհրդարանում, իսկ

ավանդական կուսակցությունները, որոնք հսկայական միջոցներ էին ծախսել ընտրարշավի վրա՝ ձախողվեցին: Այսօր էլ ժողովրդական ցանկացած ազատ կամարտահայտություն անխուսափելիորեն իշխանության է բերելու հենց «Մուսուլման եղբայրներին»: Քաղտնիքը Մերձավոր Արեւելքի համար շատ սովորական մի իրողության մեջ է. այստեղ մարդիկ ավելի մոտ են հավատին: Այստեղ իսլամը ոչ միայն կրոն է, այլ նաեւ աշխարհն ընկալելու միջոց՝ արժեհամակարգ: Հասարակ եզրափակում, իսկ այդպիսին է բնակչության ճնշող մեծամասնությունը, բոլոր հարցերի պատասխանները փնտրում է հենց իսլամում: Այս պայմաններում իսլամականները, որոնք առաջարկում են իսլամի վրա հիմնված լուծումներ, չեն կարող չհաղթել: Առավել եւս, որ լինելով փորձառու քաղաքական գործիչներ, նրանք հստակ հասկանում են որտեղ եւ ինչպես պետք է խոսել եւ գործել: «Մուսուլման եղբայրներն» արտոնեցին Մոհամեդ ալ-Բարադեյին հանդես գալ իրենց անունից՝ շատ լավ հասկանալով, որ կարիք ունեն փոխել շարժման ընկալումն Արեւմուտքի աչքում. նրանք առաջինը հայտարարեցին, որ նախագահական ընտրություններին չեն մասնակցելու՝ ցույց տալով, որ չեն ձգտում իշխանության. եւ վերջապես նրանք առաջինը գնացին իշխանությունների հետ բանակցությունների, երբ զգացին, որ մԺարը հակառակ կողմն է թեքվում:

Իսլամականները հիմա չեն շտապում գլխավորել բողոքի գործողությունները՝ հասկանալով, թե ինչ խնդիրների հետ են բախվելու նոր իշխանությունները, սակայն այս փուլում ամրապնդվելով լեգալ ընդդիմության դերում՝ հաջորդ նման հնարավորությունը բաց չեն թողնի:

## **Բանակը**

Խոսել եզրափակում ժողովրդավարության հնարավոր հաղթանակի մասին, թերեւս, միամտություն է: «Ժողովրդավարություն» բառն այսօր շատ տարածված է արաբ քաղաքական գործիչների բառապաշարում, կուսակցական փաստաթղթերում, սահմանադրություններում, սակայն իրականության մեջ այն գոյություն չունեցող երեւույթ է: Արաբական աշխարհի ոչ մի երկիր քիչ թե շատ տեւական շրջան չի ապրել ժողովրդավարության պայմաններում (բացառությամբ Լիբանանի, որը յուրահատուկ արաբական պետություն է, որի ժողովրդավարությունն էլ յուրահատուկ է՝ էթնոդավանական): Ժողովրդավարություն կառուցելու բոլոր փորձերն ավարտվել են անկայունությամբ եւ հեղաշրջումներով, որոնք, ի վերջո, իշխանության են բերել հերթական «ուժեղ մարդուն»:

1950–1960-ականների հեղաշրջումների շղթան հանգուցալուծվեց արաբական հասարակություններում ամենակազմակերպված եւ հարգանք ներշնչող կառույցի՝ բանակի իշխանության գալով: Այն տեւական ժամանակ արդյունավետ կերպով վերահսկում էր իշխանական գործառույթները՝ ունենալով բավական լայն սոցիալական հենարան, դառնալով կայունության երաշխավորն ու քաղաքական գործընթացների գլխավոր դատավորը:

Այսօր էլ արաբական երկրներում գրեթե բոլոր առանցքային պաշտոնները զբաղեցնում են նախկին զինվորականները: Սակայն տասնամյակներ շարունակ իշխանության գլուխ կանգնած էլիտան հետզհետե կարծրանում է եւ չի կարողանում համարժեք լուծումներ տալ առկա մարտահրավերներին:

Սոցիալական ընդվզման պայմաններում բանակը գնաց քայլերի, որոնք թեւ կարող են տարբեր թվալ, սակայն տեղավորվում են նույն տրամաբանության մեջ՝ պահել իշխանությունը: Թունիսում ցամաքային զորքերի շտաբի պետ Ռաշիդ Ամարը, չջանկանալով ուժ կիրառել ցուցարարների դեմ, հրաժարական տվեց: Այս քայլը մեծ թվով հետետորդներ գտավ, եւ բանակի օժանդակությունից զրկված նախագահ Բեն Ալին ստիպված էր թողնել իշխանությունը եւ հեռանալ երկրից: Եգիպտոսում բանակն առերես չէզոքություն պահպանեց, սակայն ոչ մի բարձրաստիճան զինվորական չդավաճանեց Մուբարաքին: Սա ցույց տվեց, որ բանակը չի պատրաստվում հեռանալ իշխանությունից: Ավելին, նրա համար շատ կարեւոր է մի կողմից՝ թույլ չտալ Մուբարաքի ստեղծած համակարգի փլուզումը, իսկ մյուս կողմից՝ պահպանել փողոցի համակրանքը:

Այս պարագայում հենց բանակի թեկնածուն է ամենայն հավանականությամբ լինելու Եգիպտոսի հաջորդ նախագահը (Եգիպտոսի բոլոր նախկին նախագահները գեներալներ են եղել՝ Նագիբը, Նասերը, Սադաթը եւ Մուբարաքը): Ամենահավանական թեկնածուներն են գեներալ Օմար Սուլեյմանը, պաշտպանության նախարար եւ Բարձրագույն ռազմական խորհրդի ղեկավար Սոհամեդ Յուսեյն Տանթաուիին եւ Գլխավոր շտաբի պետ Սամի Անանը:

Այս տարբերակն արժանանում է նաեւ ԱՄՆ եւ Արեւմուտքի հավանությանը: Իսկ դա երկրորդական գործոն չէ. Եգիպտոսի բյուջեի յուրաքանչյուր երրորդ դոլարն ամերիկյան է (ստացվում է օգնության կամ վարկի միջոցով): Բանակն ամեն տարի ԱՄՆ-ից ստանում է 2 մլրդ դոլարի օժանդակություն: Այս օգնության դադարեցումը բավարար է, որպեսզի երկրում տնտեսական ճգնաժամ սկսվի:

Նույնիսկ զինվորական էլիտայի իշխանության պահպանման պայմաններում, նոր իշխանությունները պարտավորված կլինեն արմատական բարեփոփումներ նախաձեռնել, որոնք ուղղված կլինեն գոնե մասնակիորեն լուծելու ամենակարելուր խնդիրը՝ հսկայական գործազրկությունը եւ խթանելու փոքր ու միջին բիզնեսի զարգացումը, որն արաբական փողոցի կենսագործունեության հիմքն է: Առանց բարեփոխումների՝ տնտեսական, ժողովրդագրական վատթարացող իրավիճակը կավելացնի սոցիալական լարվածությունը եւ կհանգեցնի նոր ապստամբությունների, որոնք այս անգամ, միանշանակ, իսլամի կանաչ դրոշների ներքո կլինեն:

## **ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ *Արաքս Փաշայան***

Ա.թ. հունվարի 25-ից Եգիպտոսի տարբեր քաղաքներում սկսվեցին հակակառավարական հուժկու ցույցեր ու հանրահավաքներ, ինչն ի վերջո ավարտվեց փետրվարի 11-ին նախագահ Յոսնի Մուբարաքի հրաժարականով: Թվում էր, թե նմանօրինակ զանգվածային միջոցառում Եգիպտոսում կարող էր կազմակերպել հասարակության որոշակի շրջանակներում ժողովրդականություն վայելող ընդդիմադիր «Մուսուլման եղբայրներ» շարժումը, որի գործունեությունն արգելվեց 1954թ.՝ երկրի փոխնախագահ Գամալ Աբդել Նասերի (1956–1970թթ.՝ նախագահ) դեմ իրականացրած մահափորձից հետո: Մուբարաքի իշխանության շրջանում կառույցը գործել է կիսաօրինական դաշտում, հրաժարվել բռնության մեթոդներից, իսկ 1984-ից մասնակցել է խորհրդարանական ընտրություններին՝ տարբեր դաշինքների կազմում եւ «անկախ» թեկնածուների միջոցով:

Սակայն, որքան էլ զարմանալի է, Եգիպտոսում հուզումների կազմակերպիչները հիմնականում աշխարհիկ գաղափարներ դավանող ու սոցիալական միջին շերտը ներկայացնող երիտասարդներն էին: Մասնավորապես՝ երիտասարդության այն կրթված հատվածները, որոնք հնարավորություն ունեին օգտվել ինտերնետից, հետեւաբար եւ՝ սոցիալական ցանցերից (մասնավորապես՝ Facebook եւ Twitter), ինչն էլ մոբիլիզացման վճռորոշ ազդակ դարձավ: Այն, որ շարժման սոցիալական բազան երիտասարդներն էին, պատահական չէր, քանի որ հենց հասարակության մեծամասնությունը կազմող երիտասարդության շրջանում են կուտակված հիմնական խնդիրները (գործազրկություն, ցածր աշխատավարձ, անորոշ հեռանկար): Եվ ահա, ոգեշնչվելով թունիսյան հեղափոխությամբ, երիտասարդները, որոնք իրենց անվանում են Ապրիլի 6-ի շարժում<sup>1</sup>, առաջ քաշեցին երկրում վարչակարգի, մասնավորապես նախագահ Յոսնի Մուբարաքի անհապաղ հրաժարականի եւ քաղաքական ու սոցիալական բարեփոխումներ իրականացնելու պահանջներ: Աստիճանաբար, հակակառավարական շարժումը սկսեց համալրվել սոցիալական ու գաղափարական տարբեր շերտերով:

Բողոքի ակցիաներին միացան նաեւ «Մուսուլման եղբայրները»,



որոնք, բնականաբար, չէին կարող այլևս լայն օրակարգ բերել իսլամիստական հեռտորականությունը, քանի որ շարժումն առաջ էր քաշում ունիվերսալ գաղափարներ, որին կողմ էին Եգիպտոսի շարքային քաղաքացիները. պայքար աղքատության, գործազրկության, կոռուպցիայի, կեղծված ընտրությունների դեմ՝ հանուն մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ազատությունների: Այնպես որ, շարժման օրերին «Մուսուլման եղբայրներին» այլ բան չէր մնում, քան խոսել իսլամական դեմոկրատիայից:

Հայտնի է, որ Արեւմուտքը եւ, մասնավորապես ԱՄՆ-ը, էապես զգուշանում են արաբական աշխարհում իսլամիստների իշխանության գալու հեռանկարից, քանի որ վերջիններս աչքի են ընկնում հակաարեւմտյան եւ հակաիսրայելյան տրամադրություններով: Կա այն հանգումը, որ «Մուսուլման եղբայրները» դեմ են Իսրայելի հետ խաղաղության պայմանագրին, պաշտպանում են «Համաս» շարժմանը եւ իշխանության գալու դեպքում՝ կարող են գործել ԱՄՆ-ի դեմ: Դա է, թերեւս, պատճառը, որ վերջին տարիներին ամերիկյան առանձին բարձրաստիճան պաշտոնյաներ, խոսելով արաբական աշխարհում սոցիալ-քաղաքական բարեփոխումների իրականացման եւ ժողովրդավարական արժեքների ներդրման անհրաժեշտության մասին, մեկ անգամ չէ, որ հասկանալ են տվել, թե Եգիպտոսի պարագայում գերադասում են աչք փակել առկա խնդիրների առջեւ՝ տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը բարձր դասելով այլ իրողություններից: Արեւմուտքը, ըստ ամենայնի, մտավախություն ունեն, որ ազատ ընտրությունների դեպքում Եգիպտոսում կարող են իշխանության գալ իսլամիստները, ինչպես դա եղավ Ղազայում, 2006-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» իշխանության գալու հեռանկարը մեծ մտավախություն առաջ բերեց նաեւ Իսրայելում, որի համար Մուբարաքի իշխանությունն առաջին հերթին կայունության երաշխիք է: Իսրայելի իշխանությունները երեսուն տարի է, ինչ համագործակցում են Մուբարաքի հետ: Բացի այդ, Եգիպտոսն առաջին արաբական պետությունն է, որն Իսրայելի հետ կնքեց խաղաղության պայմանագիր: Նմանօրինակ պայմանագիր Իսրայելի հետ արաբական երկրներից կնքել է նաեւ Յորդանանը 1994-ին:

Եգիպտոսին վերաբերող ներկա զարգացումներում հետաքրքրություն են ներկայացնում նաեւ միջազգային մամուլում շրջանառված այն լուրերը, թե վերջին տարիներին ԱՄՆ իշխանությունները, պաշտոնապես աջակցելով Եգիպտոսի վարչակարգին, միեւնույն ժամանակ, օգնել են Ապրիլի 6-ի երիտասարդական շարժմանը՝ Եգիպտոսում հնարավոր

հեղափոխություն իրականացնելու համար: Չի բացառվում, որ արտաքին դերակատարները փորձել են հակակշիռներ ստեղծել իսլամիստներին: Յունվարի 25-ի հուլուններից առաջ հենց Ապրիլի 6-ի շարժումն էր, որ Facebook-ի իր խմբի միջոցով (որի անդամները 80 հազարից անց էին) եգիպտացիներին կոչ արեց դուրս գալ փողոց՝ իշխանությունը փոխելու կոչով:

Որոշ ժամանակ անց ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ «Մուսուլման եղբայրները» չեն կարող Եգիպտոսում իշխանության գալ, քանի որ չեն վայելում հասարակության լայն շրջանակների աջակցությունը: Միեւնույն ժամանակ, ԱՄՆ իշխանությունները նշեցին, որ ապագա կառավարության մեջ պետք է ընդգրկված լինեն թե՛ աշխարհիկ, թե՛ կրոնա-քաղաքական ուժեր:

Հակակառավարական ելույթներից շատ չանցած նախագահ Յոսնի Մուբարաքը հայտարարեց, թե պատրաստ է անմիջապես հեռանալ, սակայն մտահոգություն ունի, որ երկիրը կհայտնվի քաոսի մեջ, իսկ իշխանությունն անմիջապես իրենց ձեռքը կվերցնեն իսլամիստները: Վերջիններս, սակայն, հայտարարեցին, որ չեն առաջադրելու որեւէ թեկնածություն 2011-ի աշնանն անցկացվելիք նախագահական ընտրություններին: Եգիպտոսում շատերը համոզված են, որ իշխանությունները միշտ էլ չափազանցրել են իսլամիզմից եկող սպառնալիքները՝ ձգտելով հիմնավորել ընդդիմադիրների հետ վարվելու կոշտ մեթոդները, իսկ շատ դեպքերում նույնիսկ համազործակցել են «Եղբայրների» հետ:

Եգիպտական դեպքերին իսլամական բնույթ տալու առումով հետաքրքրական էին, մասնավորապես, Իրանի կողմից տրված գնահատականները: Այդ երկրի թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ վերնախավը ներկայացնող առանձին գործիչներ հայտարարեցին, որ արաբական աշխարհում, այդ թվում՝ Եգիպտոսում տեղի ունեցող շարժումները կրում են Իրանի 1979թ. իսլամական հեղափոխության ազդեցությունը: Իրանի այաթոլաներն ավելի հեռու գնացին. նրանք հայտարարեցին, որ Թունիսի եւ Եգիպտոսի ժողովուրդներն առաջնորդ չունեն եւ պետք է որպես առաջնորդ ընդունեն այաթոլա խամենեիին, որը կարող է լինել նաեւ համայն մուսուլմանների առաջնորդը: Անշուշտ, Իրանում շատ լավ գիտակցում են, որ նման տեսակետները չեն կարող ընդունելի լինել սուննիական միջավայրում, որտեղ ավանդաբար շիաների նկատմամբ վերապահ մոտեցում կա:

Խնդիրն այն է, որ թե՛ Իրանին եւ թե՛ նաեւ Թուրքիային, բնականաբար, շահեկան է տարածաշրջանի ուժային այլ կենտրոնների թուլացումը՝ հոգուտ սեփական ազդեցության մեծացման: Հենց դա էլ այն պատճառնե-

րից մեկն է, որ ստիպեց երկու պետություններին այս օրերին ակտիվորեն արձագանքել եզիպտական գործընթացին՝ առաջացնելով դժգոհություն եզիպտոսի իշխանությունների շրջանում: Սակայն եթե համեմատելու լինենք իրանական եւ թուրքական փորձը, ապա պետք է նշել, որ արաբական շատուշատ հասարակությունների համար գերադասելի է պետության թուրքական մոդելը, որը ներկայացնում է իսլամի եւ ժողովրդավարության սինթեզ: Հենց այս մոդելն է, որ ցանկանում է ներդնել Արեւմուտքն իսլամական աշխարհում: Սակայն Եզիպտոսում դրա իրականացման հնարավորությունն ամեն դեպքում վիճարկելի է:

Այն, որ հակակառավարական հուզումները քաղաքացիական բնույթ ունեն եւ միավորում էին Եզիպտոսի քաղաքացիներին՝ անկախ սոցիալական, դավանական եւ գաղափարական պատկանելությունից, այլեւս կասկած չի առաջացնում: Ասվածի ապացույցն է հակակառավարական ցույցերին ու հանրահավաքներին Եզիպտոսի քրիստոնյաների՝ ղպտիների ակտիվ մասնակցության փաստը, չնայած տարեմուտի գիշերը Ալեքսանդրիայի ղպտիական եկեղեցու դեմ իրականացված ահաբեկչությանը: Շատ հետաքրքիր են նաեւ մուսուլման եւ քրիստոնյա ցուցարարների՝ միմյանց աջակցելու եւ միմյանց հետ համագործակցելու բազմաթիվ փաստերը: Մեկ անգամ չէ, որ քրիստոնյաները մարդկային շղթաներ են կազմել աղոթող մուսուլման ցուցարարների շուրջ՝ փորձելով ապահովել նրանց անվտանգությունը: Ղպտի հոգեւորականները նույնիսկ աղոթք մատուցեցին Թահրիր հրապարակում:

Այսօր շատ հետազոտողներ փորձում են կանխատեսել, թե ինչ դերակատարություն կունենան «Մուսուլման եղբայրները» ներկայում եւ հեռանկարում: Կազմակերպությունն այսօր կանգնած է մի շարք խնդիրների ու դժվարությունների առջեւ: Շարժման ներսում ձեւավորվել են հիմնականում երկու՝ չափավոր (ռեֆորմիստական) եւ արմատական հոսանքներ: Մի մասը կողմ է Մուբարաքի հետ բանակցությունների սեղանին նստելուն, մյուս մասը դեմ է իշխանությունների հետ ամեն տեսակ շփումներին եւ առաջ է մղում իսլամական պետության ստեղծման գաղափարը: Ռեֆորմիստներն, ըստ ամենայնի, գիտակցում են, որ արագ փոփոխվող աշխարհում դժվար կլինի առաջնորդվել ավանդական, կարծրացած կրոնական գաղափարներով, որոնք պետք է համապատասխանեցվեն ժամանակի հրամայականին, մանավանդ Եզիպտոսում, որը միշտ էլ եղել է արաբական աշխարհի ամենաառաջադեմ, մշակութային առումով ամենազարգացած երկրներից մեկը, եթե ոչ՝ առաջինը:

Առկա գնահատականների համաձայն՝ Եզիպտոսում հասարակական պահանջը, ըստ ամենայնի, աշխարհիկության պահպանումն է: Այնպես որ,

իսլամիստները չեն կարող վերցնել իշխանությունը, մանավանդ որ ուժային կենտրոններից որեւէ մեկին դա ձեռնտու չէ:

Միեւնույն ժամանակ, նույն Արեւմուտքը, թերեւս, գիտակցում է, որ իսլամիստների հետ պետք է աշխատել, եւ նրանց ինչ-որ կերպ ներգրավել քաղաքական դաշտում, այլապես՝ մարգինալացվելու դեպքում նրանց գործողությունները կարող են ոչ համարժեք լինել:

Իր հերթին, «Մուսուլման եղբայրները» հնարավորության դեպքում կփորձեն օգտագործել սոցիալական հուզումները՝ իրենց դիրքերն ամրապնդելու համար: Թե որքանով դա նրանց կհաջողվի, ցույց կտա ժամանակը: Նրանք արդեն հայտարարել են, որ հարգելու են նախկինում Եգիպտոսի կողմից կնքված բոլոր միջազգային պայմանագրերը:

---

<sup>1</sup> Երիտասարդական շարժում, որը ստեղծվել է 2008-ի գարնանը Facebook սոցիալական ցանցում՝ աջակցելու Եգիպտական Ալ-մահալա Ալ-քուբրա քաղաքի աշխատավորներին, որոնք ծրագրել էին ապրիլի 6-ին գործադուլ կազմակերպել:

## ՄՈԼՈՐԱԿԻ ՄԱՅՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ

### *Արտաշես Տեր-Չարությունյան*

2011թ. հունվարին ամերիկյան Pew Research Center-ը հրապարակեց «Աշխարհի մահմեդական բնակչության ապագան» հետազոտությունը: Չետազոտության ժամանակահատվածն ընդգրկում է 1990–2030 թթ. եւ վերաբերում է աշխարհի բոլոր պետություններին ու տարածքներին: Ըստ գլխավոր հետեւության՝ այդ 40 տարվա ընթացքում աշխարհի մահմեդականների թիվը կկրկնապատկվի՝ 1.1 մլրդ-ից (1990թ.) հասնելով 2.2 մլրդ-ի (2030թ.):

Չնայած զեկույցը տալիս է միայն գնահատականներ ու կանխատեսումներ՝ մոլորակի մահմեդական բնակչության դեմոգրաֆիկ պատկերի ու հետագա շարժի վերաբերյալ, սակայն, փաստորեն, նաեւ մատնացույց է անում այն մտահոգությունները, որ կան արեւմտյան աշխարհում՝ մոլորակի մահմեդական բնակչության թվաքանակի աճի կապակցությամբ:

### **Արեւմուտքի ուշադրության կենտրոնում**

Գաղափարախոսական տեսանկյունից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ի եւ ընդհանրապես Արեւմուտքի համար թիվ մեկ վտանգ է ներկայացվում ոչ թե չինական կոմունիզմը, այլ իսլամիզմը. արեւմտյան տեղեկատվական դաշտում «իսլամական ֆունդամենտալիզմ», «իսլամական ահաբեկչություն» ձեւակերպումներն՝ իրենց բացասական իմաստով, այսօր գերիշխող դիրք են զբաղեցնում:

Նախորդ երկու տասնամյակներում ԱՄՆ, նրա դաշնակիցների ու գործընկեր-պետությունների վարած ռազմական քիչ թե շատ լուրջ կամպանիաների գերակշիռ մասը վերաբերում է հենց իսլամական աշխարհին՝ իրաքյան երկու պատերազմները, ռազմական արշավը Սոմալիում, պատերազմն Աֆղանստանում: Այդ ընթացքում Արեւմուտքը «հարձակման ենթարկվեց» հենց իսլամական աշխարհի կողմից (2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերը ԱՄՆ-ում, 2004թ. մարտի 11-ին Մադրիդում տեղի ունեցած պայթյունը, 2005թ. հուլիսի 7-ին եւ 21-ին Լոնդոնի մետրոյում տեղի ունեցած պայթյունները եւ այլն): Եվ վերջապես՝ այսօր էլ ռազմական տեսանկյունից Արեւմուտքին սպառնալիք ներկայացնող ամենաակտիվ երկրներից է համարվում իսլամական աշխարհում առանձնակի կշիռ ունեցող Իրանը:

Սառը պատերազմի ավարտից հետո, եթե մի կողմ թողնենք հետխորհրդային տարածքում ժողովրդավարության ամրապնդմանը միտված ԱՄՆ ու Եվրոպայի ջանքերը, ապա դարձյալ՝ հենց մահմեդական աշխարհին ենք տեսնում ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից նախաձեռնված ժողովրդավարացման հերթական ալիքի թիրախում:

- 1998թ. մայիսին ԱՄՆ ճնշման արդյունքում հրաժարական տվեց աշխարհի ամենամեծաթիվ մահմեդական բնակչությունն ունեցող երկրի՝ Ինդոնեզիայի նախագահ Սուհարտոն, որը երկիրը ղեկավարում էր 1967թ.-ից: Իշխանափոխությունից հետո՝ 2004թ., Ինդոնեզիայում անցկացվեցին նախագահական առաջին ուղղակի ընտրությունները:

- 2002թ. նոյեմբերին, Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, իշխանության եկավ չափավոր իսլամական Արդարություն եւ զարգացում կուսակցությունը: Ըստ որոշ գնահատականների, այն իրագործվեց ամերիկյան սցենարով՝ արմատական իսլամի դեմն առնելու համար:

- 2003թ. մարտին սկսված իրաքյան երկրորդ պատերազմի հետևանքով իշխանությունից զրկվեց 1979թ.-ից Իրաքը կառավարող Սադամ Հուսեյնը:

- 2008թ. օգոստոսին դարձյալ ԱՄՆ ճնշմամբ իշխանությունը ստիպված թողեց Պակիստանը 1999թ.-ից ղեկավարող գեներալ Փերվեզ Մուշարաֆը:

- 2009թ. հունիսին Իրանում կայացած նախագահական ընտրություններից հետո այդ երկրում տեղի ունեցան լայնամասշտաբ հուզումներ, որոնց օժանդակման մեջ իրանական իշխանությունները մեղադրեցին ԱՄՆ ու նրա դաշնակիցների հատուկ ծառայություններին:

- 2011թ. հունվարին Հարավային Սուդանում կայացած հանրաքվեի արդյունքում՝ մահմեդական հյուսիսից (ուր 1989թ.-ից իշխում է Օմար Հասսան Ահմադ ալ-Բաշիրը) ԱՄՆ ուղղակի աջակցությամբ անջատվեց քրիստոնեական հարավը, որն իր ֆորմալ անկախությունը կիրճակի արդեն այս հուլիսին:

- 2011թ. հունվարին Թունիսում ժողովրդական հուզումների արդյունքում իշխանությունը թողեց ու երկրից փախավ 1987թ.-ից իշխող Ջիմե Էլ Աբիդինե Բեն Ալին:

- 2011թ. հունվար–փետրվարի ժողովրդական հուզումների արդյունքում հրաժարական տվեց Եգիպտոսը 1981թ.-ից ղեկավարած Հոսնի Մուբարաքը: Թե՛ Թունիսի, թե՛ Եգիպտոսի դեպքերում ԱՄՆ-ն ու Եվրոպական երկրները չեն էլ թաքցնում, որ նպաստել են հուզումներին:

## **Չեկույցի որոշ հետեւություններ եւ տվյալներ**

Հիմնական հարցը, որին փորձել են պատասխանել հետազոտության հեղինակները, հետեւյալն է, թե ինչքան արագ է աճում աշխարհի մահմեդական բնակչությունն ու հետեւաբար՝ դեմոգրաֆիկ ինչ հարաբերակցության Արեւմուտքը կբախվի 2030թ., այդ թվում՝ «տանը»:

Ըստ Չեկույցի, եթե 1990թ. մահմեդականները կազմում էին 1.1 մլրդ կամ ողջ աշխարհի բնակչության 19.9%-ը, ապա 2010թ. նրանց թիվը հասել է 1.6 մլրդ-ի կամ ողջ մոլորակի բնակչության 23.4%-ը, իսկ 20 տարի հետո այդ թիվը կկազմի 2.2 մլրդ կամ ողջ երկրագնդի բնակչության 26.4%-ը: Այսինքն՝ 2030թ. մոլորակի չորս բնակչից առնվազն մեկը մահմեդական է լինելու:

Չեկույցի համաձայն, եթե 2010 թվականին 72 երկիր ուներ մեկ միլիոն եւ ավելի մահմեդական բնակչություն, ապա 2030 թվականին այդպիսի երկրների թիվը կհասնի 79-ի: Միեւնույն ժամանակ, եթե 2010 թվականին աշխարհում կար մահմեդական բնակչության մեծամասնությամբ 49 պետություն, ապա 2030-ին նման երկրների թիվը կավելանա մեկով (Նիգերիա)՝ դառնալով 50:

Ըստ հետազոտության, 2010–2030թթ. ընթացքում մոտավորապես կպահպանվի սուլենի/շիա մահմեդականների հարաբերակցությունը: Հետազոտությունը մահմեդական բնակչության աճի հիմնական երկու պատճառ է նշում. ծնելիությունը եւ մահմեդականների շրջանում կյանքի տեւողության երկարումը:

Այդուսակ 1-ում բերված է մի շարք երկրներում մահմեդական բնակչության չափաբաժինը՝ ըստ վերոնշյալ Չեկույցի:

## **Արեւմուտքն արձագանքում է**

Անցած տարվա օգոստոսին Գերմանիայում լույս տեսավ Bundesbank-ի տնօրենների խորհրդի անդամ, Բեռլինի սենատի նախկին անդամ Տիլո Սարացինի հայտնի գիրքը՝ «Գերմանիայի ինքնասպանությունը»: Այդ գրքում Սարացինը ներկայացնում է այն վտանգը, որն առաջանում է գերմանացիների մոտ ծնելիության անկման ու մահմեդական երկրներից Գերմանիա հոսող ներգաղթյալների թվի անընդհատ մեծացման հետեւանքով: Ըստ Սարացինի, իսլամ դավանող ներգաղթյալներն անգամ երկրորդ ու երրորդ սերնդի ընթացքում չեն ցանկանում եւ չեն կարող ինտեգրվել գերմանական հասարակության մեջ՝ այդպիսով հիմք դնելով Գերմանիայում «իսլամական վտանգի» առաջացման համար:

Տիլո Սարազինի գրքի լույս տեսնելուց շուրջ մեկ ու կես ամիս անց՝ 2010թ. հոկտեմբերի 16-ին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ելույթ ունենալով հարազատ՝ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության երիտասարդական թևի առջև, հայտարարեց, թե տասնամյակներ երկրում տարվող բազմաձևակության քաղաքականությունը տապալվել է, եւ որ ներգաղթյալների հոսքը զսպում է գերմանական տնտեսության առաջընթացը:

Խոսելով բազմաձևակության տապալման մասին՝ Մերկելը, սակայն, չէր նշել, թե ինչ է առաջարկվում որպես այլընտրանք: Այդ բացը, թերեւս, լրացրեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնը: Փետրվարի 6-ին, ելույթ ունենալով Մյունխենում ընթացող անվտանգության հարցերով միջազգային համաժողովի ժամանակ, նա հայտարարեց. «Բազմաձևակության քաղաքականությունը չարդարացրեց իրեն, եկել է մկաններով լիբերալիզմի ժամանակը»:

Աղյուսակ 1

Երկիր	1990թ.		2010թ.		2010թ.	
	մահմդ. թիվը/հազ.	% ընդհանուր բնակչ.	մահմդ. թիվը/հազ.	% ընդհանուր բնակչ.	մահմդ. թիվը/հազ.	% ընդհանուր բնակչ.
Վրաստան	625	11.5%	442	10.5%	433	11.5%
Ադրբեջան	5 635	78.1%	8 795	98.4%	10 162	98.4%
Իրան	56 506	99.6%	74 819	99.7%	89 626	99.7%
Թուրքիա	55 121	98.3%	74 660	98.6%	89 127	98.6%
Ռուսաստան	13 634	9.2%	16 379	11.7%	18 556	14.4%
ԱՄՆ	1 529	0.6%	2 595	0.8%	6 216	1.7%
Ֆրանսիա	568	1.0%	4 704	7.5%	6 860	10.3%
Գերմանիա	2 506	3.2%	4 119	5.0%	5 545	7.1%
Մեծ Բրիտանիա	1 172	2.0%	2 869	4.6%	5 567	8.2%
Չինաստան	16 839	1.5%	23 308	1.8%	23 949	2.1%
Հնդկաստան	100 873	11.7%	177 285	14.6%	236 182	15.9%
Իսրայել	634	14.1%	1 287	17.7%	2 135	23.2%
Հունաստան	254	2.5%	527	4.7%	772	6.9%



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գարեգին Նժդեհ ՋԱԻԱՎԿՍ .....	1
Գագիկ Տերտերյան ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	4
Սուրեն Սարյան ԱՊԱԳԱՅԻ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	8
Վերջիհան Ջիֆլիօղլու ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԹՈ ՑԵՂԱԽՈՒՄԲԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ .....	12
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ .....	16
Հայկ Գաբրիելյան ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ .....	21
Սուրեն Մանուկյան ՎԵՐՆԱԽԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ .....	25
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾ ՈՆԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՈՐԾ ԸՆԹԱՑՈՒՄ .....	32
Արտաշես Տեր-Հարությունյան ՄՈԼՈՐԱԿԻ ՄԱՅՍԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ .....	37

*Շապիկին պատկերված է  
տեսարան Չամչենից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕԼՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: